



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

2-79



5422  
ՁԵ-68

ՍԱԹԵՆԻԿ

Ր. ԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԵՑ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԻՏԵՆ



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1904

11

8105 40 0 0

ሀ ለ ቶ ቴ ን ኮ ካ

//

08.04.2013

19 NOV 2011

891.99 ucy  
5-79

# ՍԱԹԵՆԻԿ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԵՑ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒՅԻՆ

1001  
857



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1904



ԱՐՄԵՆԻԱ

ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ

1971

ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ




ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1971

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՍԱԹԵՆԻԿ	ԿԱՊԱՐՃԱԿԻՐՆԵՐ
ԱՐՏԱՒԱԶԴ	ԲԱՆՏԱՐԿԵՍԱԼՆԵՐ
ՎՐՈՅՐ	ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ
ԱՐՓԵՆԻԿ	ՊԱՐԷՏ
ԱՐՄԵՆԻԿ	ՓԱՌՆԱՍ
ՆԱԺԻՇՏՆԵՐ	ՇԱԻԱՐՇ
ՍՈՒՔԻԱՍ	ՊԱՐՈՅՐ
ՈՍԿԵԱՆՔ	ԶԱՐԵՀ
ՈՐՍՈՐԴՆԵՐ	ՔՈՒՐՄԵՐ
ՊԱՀԱԿՆԵՐ	ՈՒՐՈՒՍԿԱՆ



## ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

ՍԱԹԵՆԻԿ, ՆԱԺԻՇՏՆԵՐ, ՍԵՆԵԿԱՊՍՏ

Տեսարանը Արտաշատի մէջ է. թատերաբեմին առջև Արտաշէսի արքունական դահլիճը, առաստաղը ոսկեգրուագ, գունագեղ, որմերը արջերու, վագրների, առիւծների և եղնիկների մորթերով զարդարուած. որմերու կեդրոնը մի մի մեծ գորգ, որոնց վրայ կոկիկ շարուած են պատերազմական զէնքեր, դրօշ, զրահ, վահան: Գետինը կարմիր դեղին ու սև փոքրիկ քարերով մոզայիքաձև նկարուած: Սենեկի շորս կողմը կան բազմոցներ բեհեզապատ, բարձեր, բարձիկներ ոսկեհիւս, արծաթահիւս կերպասներով պատած: Սենեկին կեդրոնը դիցաբանական արձան մը՝ հաստ խարսխի մը վրայ, կրակի բոցին գալարուած թեւաւոր վիշապ մը, բոցերուն մէջէն թեւաւոր մանկիկ մը մերկ՝ որ կ'ուզէ ազատիլ վիշապի բերնէն: Դահլիճի դիմացը լայն ու մեծ կամարակապ մը ոսկեծոպ վարագոյրով. կ'երեսին պատըզգամին մարմարէ սիւները և քիչ մը հեռուն արքունական լճակը: Մթնշաղ է. կը լսուի սօսիներու մեղմիկ շխրտօցը, անտառներու ճեղքերէն լուսնակի բեկբեկ ճառագայթները կայծակի ալիք մը կը շողացնեն լճակին մէջ, հոն կը տեսնուին ճերմակ գօտելոյժ պարեգօտներով Սթենիկի երգիչ նաժիշտները, որոնք լաստի մը վրայ դիզուած կը թիավարեն: Սթենիկ ընկողմած է պատշգամի բազմոցին վրայ. քովը կայ ջահ մը, ուր իր ափովը շարունակ խնկաւէտ արծարծուն նիւթեր կը նետէ,



բոց մը հաստարուն, սրածայր, մթութեան մէջ օձապտոյտ կը բարձրանայ: Սենեկապան նաժիշտ մը, տանըէինդ տարեկան, կը գանուռի դահլիճին մէջ, հագած է մետաքսէ պարեգօտ մը կարճ, սրունքները կարմիր գուլպայներ, ստուըներուն անցուցած է ձերմակ կաշիով հողաթափներ. վիզը երկայն, բարակ ու փղոսկրեայ. դէմքը ձերմակ, աչուըները կտր ու խոշոր, ծաւիմազերը խարտեաշ՝ ոսկի փոշիով ծփծփուն նետուած են ուսերուն վրայ ու մէկ հաստ արծաթ ժապաւէնով կապուած է գլուխը: Վարագոյրը բացուելուն, կը լսուի լճակի նաժիշտներու երգը:

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՆԱԺԻՇՏՆԵՐ

Ոսկի թիակ մըխըրձենք  
 Քըշենք առաջ լաստափայտ.  
 Նաժիշտք չըքնաղ Սաթինկան՝  
 Երգեր հիւսներ երգ սիրուն:  
 Վաշ քեզ լուսնակ հազար վաշ  
 Ամէն ամիս պառաւնաս.  
 Վաշ քեզ լուսնակ հալումաշ  
 Տըխրիս մեռնիս նախանձէդ,  
 Քանի այտեր Սաթինկան  
 Միշտ անթառամ ամէն ամ  
 Յուան շողան գոյն ծիրան:

ՍԱԹԵՆԻԿ

Երանի ձեզ Նաժիշտներ, քան Ալանաց օրիորդին  
 Չեզ տան երկնից աստուածներ հազար երնէկ հա-  
 (զար փառք:

Այտերս ոսկի շողշողուն սակայն սիրաս է տիղմ  
 (գլխոխք.  
 Կարլամ անէծք այն բերնին, հազար անէծք այն  
 (բերնին  
 Որ մարեց սըրտիս հեշտանք, խըլեց հողոյս ամէն  
 (փառք:  
 Անէծք բերնիդ Սուքիաս նոր կըրօնքիդ բիւր անէծք:  
 ՆԱԺԻՇՏՆԵՐ

Մեր երգերով սըրինգով  
 Թուլենք ամէն ոգիներ:  
 Հարս մեր նազուկ Սաթենիկ  
 Սաթենիկ սաթ մարդարիտ,  
 Բոլոր ահունք թանկագին  
 Հըրատ մեղուշ աչերէդ  
 Կայծ կը խըլեն կայծ անուշ:  
 Յայտէ կըրակ ցայտէ բոց  
 Չար ոգիներ խայտառակ  
 Կու հեռանան գըլխիկոր:

ՍԱԹԵՆԻԿ

Ալանաձին՝ սիրուն արիւն, հարազատ իմ սիրելի  
 Պարծանք ազգիս Ալանաց, քղար սըրտիս բիրտ  
 (փականք:  
 Անահիտ մայր կաթողին անթէ կակղէր քո հողին.  
 Թող ընկերըդ խոտակեր, եկ համբուրէ զԱնահիտ  
 Որ ողորմած է մայրիկ, քեզ դաւաճան չի գըրեր  
 Հայ հեթանոս տըրփալի մեր վաղեմի կըրօնքին:

Խոտակերին քարոզներ քեզ խընցին մեր գրկէն,  
Դարձիր սիրուն Սուքիաս, դարձիր ի գիրկ աստուածոց  
Դարձուր ինձի տարփելի իմ վաղեմի դաւանանք:

Սենեկապան Արփենիկը ձեռքը սանթուռ մը առած, կը վագէ պատշգամ, ճնարդիւր Սաթենիկէ սնարին քով կը դարնէ սանթուռը ու կ'երգէ:

## ԱՐՓԵՆԻԿ

Տեղաց երկինք, տեղաց ոսկի մարգարիտ,  
Քո հարսնութեան տեղաց Արաքս ազամանդ,  
Չիւնի հատեր, ամպի կայլակ ու սառեր  
Դարձան եղան արծաթ ոսկի զընդակներ:  
Տեղաց երկինք, տեղաց ոսկի մարգարիտ:  
Ո՛ր մէկ օրիորդ Անահտաձին զիցանոյշ  
Քան ըզտիկին մեր Սաթենիկ է քնքուշ,  
Անահտաձին պարք կուսանաց հով անուշ  
Ոսկի բերնով հա՛ փըչեցէք Սաթինկան  
Ան մարեցէք սըրտին կըրակ ամէն զիշա:

## ՍԱԹԵՆԻԿ

Ե՛կ ո՛վ զըստրիկ նաժիշա սիրուն նազելի  
Եկ փարելի նաժիշա զըստրիկ իմն ազնիւ:  
Քանց ամենայն իմ նաժիշաներ ես սիրուն:  
Անհուն սիրուդ անկեղծութիւնն որ ի քեզ  
Նախանձելի է մեհնի կուսանաց,  
Տաճարական ամէն կոյսեր՝ նախանձին  
Քեզ ո՛վ զըստրիկ: Ըստըրկածին չես ծընունդ  
Դիցածին ես պաշտելի ես իմ սըրտին:

Թէ Անահիտ ու ամէն զիք երկնային  
Գան զիս պաշտեն ու խոնարհին իմ առջեւ,  
Մերժեմ զիրենք գրկեմ ըզքեզ իմ զըստրիկ:  
Երգէ երգէ նազելիս  
Դու տարփելին իմ սըրտին:

## ԱՐՓԵՆԻԿ

Ըստրուկ հոգիս հարս տիրուհի մեր փառաց,  
Եթէ այսքան է փարելի պաշտելի,  
Անտա՛ ինձի վանէ սըրտէզ ամէն զիշա:  
Մոռցիր այն նոր ամէն խըրատ Քրիստոսեան:  
Եթէ կ'ատես անէծք կարգաս նոր կրօնքին,  
Ինչո՞ւ վախնաս անոր սաստէն անպիտան:  
Սուքիասայ խըրատ քարոզ ծաղրական  
Թափէ մըտքէզ հաշածէ չար ոգիներ:  
Իր տիրուհիս իմ թագուհիս ան ի զուր  
Ի զուր մաշիս, ի սէր գեղոյզ պաշտելի  
Մոռցիր այն նոր ամէն խըրատ Քրիստոսեան:

## ՆԱԺԻՇՏԵՆԻԿ

Երգեր հիւսենք երգ ցնծուն  
Վանենք այն վատ ոգիներ,  
Անհուն ցաւեր Սաթինկան  
Երգով վանենք մեռցընենք:  
Մըխենք ոսկի թիակներ,  
Արծաթաշող պատռենք շուր,  
Թիափարենք ու պարենք,  
Հիւսենք երգեր երգ անոյշ,

Սիրենք հարս մեր դիցանոյշ:

Սենեկապան Սաթինկան

Բիբ նազելի Արփենիկ

Քրնար անոյշ լարէ զարկ,

Հնչակ ու զիլ կարկաչով

Չայնո սլորուն հընչէ զիլ.

Մըխիթարանք սիրելոյն

Դեզ բալասան է անհուն:

Երանի բեզ Արփենիկ

Նափիշտ սիրուն խատուտիկ

Մոգէ մոգիչ քընարով

Մոոցուր ցաւեր Սաթինկան:

ԱՐՓԵՆԻԿ

Թէ գիտնայի Տիրուհի որ երկընքի մարգրիտներ  
Սըրտիկ խոցին՝ ունին զեղ գազանի հըզօր բա-  
(լասան,

Թեւեր առած թըւչունի, ճախրելով վեր դէպ ի վեր  
Աստղերէ աստղ արփաթեւ կը թըւչէի շեշտակի  
խոցիկ զեղեր գըրանելով, գըգուէի վէրքըզ փափուկ:

ՍԱԹԵՆԻԿ

Սիրեմ ըզբեզ Արփենիկ սիրեմ ըզձեզ նափիշտներ.  
Մըխիթարել զիս կ'ուզէք, վաշիմ հոգւոյս սըրտիս հէք  
Մուքիասայ նոր քարոզ զիս շըւարեց ու ցընցեց:  
Թէ կու ճանչնաք քաջ վըհուկ, բերէք առնեմ հար-  
(ցուփորձ:

կ'ուզեմ գիտնալ ինչ սատան զիս չարչարէ ու  
(լըլկէ:

Ինչ չար ոգի է այն որ նեղէ տանջէ զիս անգու-  
Բերէք ինձի քաջ վըհուկ, բերէք առնեմ հարցուփորձ:

ԱՐՓԵՆԻԿ

Թող իմ բամբիշ Տիրուհի վըհուկներու հարցու-  
(փորձ,

Գիտցիր ըսաւ ինձ մի օր հնդիկ ըսպայ մը, գիտցիր  
Արփենիկ, որ այն ամէն ըսքանչելիք հրաշագործ  
Երբ կը թաքչին կեղծ պատիր վըհուկներու քօ-  
(ղին տակ

Հաւատար են նանրութեան, հաւասար են ոչինչին.  
վըհուկներ, մեհենականք գուշակութեամբ ծա-  
(ղրական

Խաբեն ըզմեզ ահ կը ձըզեն մահկանացուաց  
(մաքին մէջ:

Թէ կատարին գուշակութիւնք կը վերագընմ կոյր  
(դէպքին:

ՍԱԹԵՆԻԿ

Ո՛ր է հընդիկ այդ ըսպայն որ խրոխտութիւն բեզ  
(փըչեց,

Եւ դու անվախ երկնից շանթէն, ծաղրես ամէն  
(գուշակներ,

Ծաղրես ամէն վըհուկներ, ծաղրես ամէն գաղ-  
(անիքներ:

կ'ուզեմ տեսնել այդ ըսպայն, քըննել անոր բա-  
(րոզներ.

Թէ ուժ ունի իր լեզուն, թող գայ լըզէ սըրախս վէքք:  
Զիս հողիններն են խոցած, նոր կըրօնքի հողիններ:  
Տարփեիլիւ իմ Արփենիկ կանչէ ըսպայն բուժէ զիս  
Թէ վըհուկներ չունին ուժ, խիզախ խօսքեր զիս  
(փրկեն:

ԱՐՓԵՆԻԿ

Վաշ եղկելոյս հազար վաշ որ չեմ կարող Տիրուհւոյս  
կատարել կամք ըղձալի, կ'ողբամ այն օրն ահաւոր  
Կ'ողբամ կոծիմ, երբ կը յիշեմ իմ տարփեիլի այն  
(ըսպայն:

ՍԱԹԵՆԻԿ

Նազելիւ իմ՝ նաժիշտ դու,  
Ի՛նչ է գաղտնիք ըսպային:  
Յուզէ ըզքեզ իր անուն  
Ինչո՞ւ կ'ողբաս դառնագին:

ԱՐՓԵՆԻԿ

Կ'ողբամ ըսպայն այն հընդիկ, իմ մըտերիմ այն  
(կըտրիճ.

Ա՛խ Սաթենիկ տիրուհիս մէկ հարուածով Ար-  
(տաւազ

Զայն իմ զըրկէս ապշոպեց աւագ որդիդ ժանտաւ-  
(ժուտ:

Նախանձ յիմար հրկեհեց Արտաւազըին վայրագ  
(սիրա,

Խըլեց հողին սիրեւոյս, բայց չի կըրցաւ տիրել ինձ.  
Ատեցի զինք յաւիտեան բոլոր սըրտովս ատեցի:

ՍԱԹԵՆԻԿ

Արտաւազայ ատելութիւն վատութիւն  
Վաղուց ծանօթ են ինձ՝ սիրուն Արփենիկ.  
Իմ՝ այն որդին կատղեցուցին չար կուսանք.  
Սրաիդ սիրած հէք սիրահարն արդ կու ըստ  
Ան թէ սիրես քո տիրուհին մուցիր այդ քո գառ-  
(նութիւն,  
Գըտիր դարման վըշտերուս, եղիր սըրախս մըլխի-  
(թար:

ՆԱԺԻՇՏՆԵՐ

Ինչո՞ւ մոռցաւ Սաթենիկ  
Իր աննըման դեղն ու փառք.  
Ինչո՞ւ խօսքով քարսով  
Նոր կըրօնքին հըմայքով  
Կը վըրբովի խըռովի:  
Սաթենիկ հարս չըքնազ մայր  
Արիացիւ քաջացիւ,  
Ոգիններուն սարսափն ահ  
Չազդեր խիզախ սըրտերու.  
Արհամարհէ փուճ երկիւղ  
Սուքիասայ ամէն սաստ:

ՍԱԹԵՆԻԿ

Նաժիշտ սիրուն Արփենիկ, եղիր մատիս ուշադիր,  
Դիտէ զըղեակն այն հետուն, քովի անտառըն մըլթին.  
Տես կեղբոնին այն վառ բոց, դա յատուկ է ինձ  
(ըրշան.

Արի առ այս բանալին, աշտարակի ներքնուղին  
 Երկաթ փեղկով է փակուած, փութա բաց զայն  
 (առանձին.  
 Ձանա նոյն իսկ ծածկել քեզ՝ ողիներու սուր  
 (աչքէն:  
 Լուս փեղկը բաց հեռացիր, գաղանի պահէ իմ  
 (պատուէր:

ԱՐՓԵՆԻԿ

Ես քու սիրոյդ Տիրուհի,  
 Ուրուականի նուրբ հոգի  
 Կ'առնեմ կ'ըլլամ անմարմին,  
 Կ'անցնիմ անտես ամբողին:  
 Բանտեմ գաղանիք սըրտիս մէջ,  
 Եւ ոչ դաշոյն ահաւոր  
 Կըրնայ խըլել գուրս հանել  
 Ինձի տըրուած գաղտնիքներ:

Արփենիկ այս խօսքերը արտաբերելով, կը համըուրէ Սաթնկան ձեռքը, կը հեռանայ բանալին ձեռքը: Սաթնիկ մէկ քիչ յուզուած կը թողու պատշգամը կը մտնէ դահլիճ, շուտով թաղեցող ման կու գայ, ինքն իրեն կը խօսի:

ՍԱԹԵՆԻԿ

Ոսկի օրեր, իմ հարսնութեան պերճ տարիների  
 (յիշատակ,  
 Յաւէա մեռնին, քանի իմ մէջ անցեալ կեանք  
 (գառնութիւն  
 Չարհուրանք միշտ արծարծէ, ու հոգիս միշտ կը  
 (հիւծի:

Մօտեցաւ ինձ գերեզման, արքունական փառք վայելք  
 Չունին ճաշակ և հրապոյր. ինչո՞ւ այլեւս ես ապրիմ:  
 Արտաշէս զիս կասկածոտ աչօք զիտէ տըրամագին  
 Արքունականք հարազատ՝ սրտի վէրքով հեռացան:  
 Ինձ տարիների հարս ըսին, և կոյս չըքնազ Ալանաց,  
 Սակայն արգանդս անիծած ծընաւ իժեր, վի-  
 (շապներ:

Ալս Սուքիաս ձեռ սիրուն և հարազատ ազգակից  
 Բերնէզ թըռած այն խօսքեր իբրեւ վիշապ ահաւոր  
 Չիս կը լըլկեն և կեանքս ամբողջ գրժոխք եղաւ  
 (ինձ համար:

177  
 1001  
 Թէ ճըշմարիտ է քս կրօնք թէ քու աերդ է փըրկել  
 Ինչո՞ւ խօսքերդ ի սըրտիս լըցին խըռով ահաւոր.  
 Ինչո՞ւ հոգիս անհանդիստ կը ծըփծըփի տարուեր:

ՆԱԺԻՇՏՆԵՐ

Պատըզամին ոսկի ջահեր զեղեցիկ  
 Բոց խընկաւէա բոց ոլորուն արծարծեն.  
 Պատըզամին գահաւորակն ու բարձիկ  
 Փափկափետուր մահիճ փափկիկ ըսպասեն  
 Քեզ Սաթնիկ, քեզ ըսպասենք Տիրուհի:  
 Արի մատիբ թող քու մեռած կըսկիծներ  
 Ել պատըզամ, արի մեզի երեցիր:

ՍԱԹԵՆԻԿ

Թողէք նաժիշտք զիս հանդիս,  
 Յաւերուս մէջ զիս թողէք.  
 Երբ ես յիշեմ փառքս անցեալ



Քանամ վերքեր ինձ համար:  
 Քանի պատմեց Սուքիաս  
 Մեղաւորաց պատուհաս,  
 Քանի ցուցուց թէ նանիր  
 Անցուցի կեանք գէշ զազիր,  
 Ես աչազեղ Սաթենիկ  
 Խամրած շուշան մը դարձայ.  
 Դըժոխք բերանն իր բացած  
 Պատրաստ է գիտ կըլլելու:  
 Թող զազարին ձեր երգեր  
 Զախջախեցէք ձեր քընար.  
 Գերեզմանիս հողը չոր  
 Զեր արցունքով մարգարիտ  
 Զարդարեցէք նաժիշաներ:

Արիենիկ վազելով ու տագնապած թատերաբեմ կը մըտնէ:

ԱՐՓԵՆԻԿ

Վաշ օրերուդ հազար վաշ  
 Սաթենիկ քեզ հազար վաշ:

Կը հեռանայ տագնապած:

ՍԱԹԵՆԻԿ

Մի հեռանար Արիենիկ  
 Արի ի՞նչ գուժ ահաւոր:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Արտաւազդ յամրաքայլ և ժանտ տխուր երեսով կը ներկայանայ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Մայր իմ տեսնեմ ըզքեզ յոյժ տարօրինակ խրոտիւած  
 Հանդարտ սըրտով ինձ մատիր. մոռցիր զԱրզամ  
 (եղկեղին:

Այս է ծըրար թանկագին և կողոպուտ խիստ արդար.  
 Հոս զըրի այն շըքադիր ամէն նըշան, զոր Հայր իմ  
 Արտաշէս, պարգեւ տուած էր նենդաւոր Արզամայ:

ՍԱԹԵՆԻԿ

Զուտաւական որդի ժանտ  
 Օ՛ն զաշոյնդ կուրծքըս խըրէ,  
 Դարեր երգեն քեզ համար  
 Գուտանք երգեն Արտաւազդ  
 Կոչեն ըզքեզ մայրասպան:

Արտաւազդ տեսնելով մօրը այլայլութիւնը, կ'անէ անոյշ կերպարանք մը:

ԱՐՏԱՒԱԶԴ

Մայր իմ ներէ այս ժամուս, ինձի ներէ մայր  
 (քաղցրիկ  
 Դաւաճանին Արզամայ վըրէժինդիր երբ կ'ըլլամ՝  
 Դու մի խոտիլիր տագնապիր. սիրեմ յաւէտ Հա-  
 (յաստան  
 Ես քան զԱրզամ վատոյին վատ նախանձորդ մեր  
 (փառքին:

## ՍԱԹԵՆԻԿ

Թէ զիս սիրես Արտաւազդ,  
 Ինձ մօտ կանչէ զԱրփենիկ  
 Կողոպուտիւ պատմութիւնն  
 Յետոյ պատմես անխրոտի:  
 Գընա կանչէ զԱրփենիկ  
 Թող ինձ երգէ հանդարտիկ:

Արտաւազդ կը հնազանդի:

## ՍԱԹԵՆԻԿ

Հայր Արամազդ, Արամիս, զիք զեցուհիք  
 Հարէք սուրով շանթով հոգիս խըլիցէք,  
 Քանի թողի ըզձեզ և ձեր պաշտամունք  
 Արժանի եմ ձեր շանթերուն անխընայ.  
 Վաշ եղկեբոյս, վաշ տատանեալ հէզ սըրտիս  
 Ուր չիք խորան կըրօնք ամուր անասան.  
 Ոչ Արամազդ, ոչ նոր Փըրկիչ ոչ սատան  
 Եւ ոչ հրեշտակ կըրնան փըրկել իմ հոգին:  
 Երկինք անէծք կարդաց զըլիս բիւր անէծք  
 Հին աստուածոց երբ պաւածան զիս տեսաւ:  
 Դիք զեցուհիք և զօրութիւնք զիս մոռցան  
 Մոռցայ և ես զիս խընամող հին կուռքեր:  
 Արփենիկի մահասարսուռ ախ ու վաշ,  
 Սըրտիս կարդայ գուժ ահաւոր հասցընէ:  
 Արտաւազդայ բերած ծըրար արգեօք ինչ  
 Ինչ նոր վըշտեր պիտի բանայ իմ սըրտիս:

Կը հաննի Արփենիկ հանդարտօրէն կը խօսի:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

## ԱՐՓԵՆԻԿ

Պատահարներ սրքան ըլլան գառնագին,  
 Քան քու հոգին ախ չեն բընաւ թանկագին:  
 Արիացիր պաշտելի մայր. ես ունիմ  
 Քեզ աւետիս. թէ սեւ ըլլան իմ լուրեր  
 Թէ քեզ ըլլամ արխուր դուժկան, քաջացիր ...

## ՍԱԹԵՆԻԿ

Գուժէ պատմէ Արփենիկ  
 Ասա բացի՛ր գոց զընոակ:

## ԱՐՓԵՆԻԿ

Փափկիկ քայլով անշըշուկ,  
 Մօտեցայ ես գոց զըրան.  
 Բանալին երբ պարձուցի,  
 Բընեց բազկէս Արտաւազդ.  
 Ուժդին նետեց զիս գետին,  
 Խըլից ձեռքէս բանալին.  
 Ես շուարած քեզ հասայ,  
 Ու չի կըրցայ հաղորդել  
 Այս պատահար ահաւոր:

## ՍԱԹԵՆԻԿ

Չունի այնքան զարհուրանք  
 Այս քու բերած փոթորիկ.  
 Թէ զիս սիրես Արփենիկ

Շուտով կանչէ զԱրտաւազդ.  
Նա կը կարծէ թէ Արգամ  
ինձ տեսութեան գայ ծածուկ.  
Հասիր շուտով ներքնողին,  
Ասա որդւոյս ու խնդրէ,  
Փութով իր մայր տեսնելու.  
Գիտեմ որքան Արտաւազդ  
Ունի արիւն կըրակոտ,  
Սակայն իր մօր աղաչանք  
Մարէ սըրտին վառ կըրակ:

## ԱՐՓԵՆԻԿ

Թէեւ սարսիմ Արտաւազդէն,  
Ու գողզըզամ հարուածներէն,  
Բայց քո սիրոյդ, իմ տիրուհիս  
Ձոհել պատրաստ եմ իմ հոգիս:

Աճապարեւով կը մեկնի սենեկապան Արփենիկը: Մենակ կը  
քնայ Սաթենիկ ու առանձնաբար այլայլած կը խօսի:

## ՍԱԹԵՆԻԿ

Ինչո՞ւ արգանդիս անդրանիկ պըտուզ  
Այսքան երկդիմի եղաւ ժանտ բարի,  
Արտաշէսին թագ ինչպէս պիտի կրէ  
Որդիս անդրանիկ սիրուն խելագար:  
Օրեր ահաւոր, դառնազին ժամեր  
Ինձ ծընաւ որդիս ծընունդս անդրանիկ.  
Խոցեց սիրեց զիս, ամէնուն դաժան  
Եղաւ ահաւոր և ինձ զարհուրանք

Եղաւ շատ անգամ. բայց իր սէրն անկեղծ  
Սըրտէս անբաժան արծարծեց իր մէջ:  
Ո՛հ ինչ այլանդակ բընաւորութիւն  
Է միանգամայն խոցելն ու սիրելն:  
Բայց այս վատ բընոյթ ծիծէս չի ծըծեց.  
Արտաւազդ որդիս, մանուկ հասակին  
Մատաղ տարիքին, բարի էր բարի.  
Իր չար հոմանիք հարսը յաչաղկոտ  
Փոխեցին որդիս խելքը թըրցուցին.  
Ծըծեց անոնցմէ իժի քարբի թոյն  
Թունաւորեցաւ անդրանիկ որդիս:  
Վատ ազգեցութիւնք տարփելիներուն  
Դիւթեն հաւասար թոյն ու կորովին:  
Վա՛շ քեզ Արտաւազդ, բընաւորութեամբ  
Թէ այսպէս անգոյն կ'ապրիս անդադար,  
Հազար ու բիւր վար Արտաշէսի թագ  
Եւ մօրդ արտասուք ոգիներ բարի  
Պիտ' ողբան ու լան վաշեր պիտ' կարդան:  
Գըլխէդ աւելի գըլխուս հազար վա՛շ,  
Դէպքեր կը բարդին կ'ըլլան ինձ ջախջախ:  
Գողթան բընարներ այլ եւս ինձ համար  
Լըռած են յաւէտ, Գողթան զուսաններ  
Երգերով անոյշ չեն կարող մեղմել  
Սըրտիս անհուն ցաւ: Հաւատքի գաղտնիք  
Քանի սըրտիս մէջ չունին հիմ անխախտ,  
Չեմ կարող ապրել ոչ զերդ հեթանոս,  
Չեմ կարող ապրել ոչ զերդ քրիստոնեայ:



Նախկին իմ կըրօնք և դասք քըրմականք  
 Զիս համոզեցին թէ սլիմբական  
 Տիեզերակալ հըզօր դիցապետ  
 Է ամպրօպածին ահեղն Արամազդ.  
 Այժմ Սուքիաս՝ Քրիստոսին միակ  
 Դաւանի կըրօնք ճըշմարիտ հըզօր.  
 Քրիստոս դաւանի աշխարհի փըրկիչ  
 Քրիստոնեայ կըրօնք ընդունի մաքուր,  
 Եւ այլ կըրօնքներ անուանէ խենեշ.  
 Պատմէ մարդկութեան Քրիստոսի հըրաշք,  
 Որ թէ ընդունուին իրօք ճըշմարիտ,  
 Քան ըզնոր կըրօնք չիք այլ վեհ հաւատք.  
 Բայց ինձ զարհուրանք ազդէ այդ Աստուած  
 Դաժան է անոր պայմանք գատաստան.  
 Վարդապետութիւնք չունին գութ ու սիրտ  
 Պատիժ ահաւոր ըսպառնայ անոր,  
 Որ անոայ անսաստ բընութեան ըմբօստ.  
 Պատուիրէ ջընջել բարկութիւն նախանձ,  
 Մեոցընել մարմնոյ բընական հեշտանք.  
 Պատուիրէ ըլլալ ոչ խիղախ գազան,  
 Այլ զերդ հեղ սշխար ներել սոտիխ,  
 Մերժել սէր վայելք սիրել տանջանք, վիշտ:  
 Քանի բընութիւն, բընական կազմած  
 Մարդուս էութիւն ի բնէ է ըմբօստ՝  
 Այդ հեղ քարողներ կարող են ընկճել  
 Մեր գազանութիւն վայրագ բընութիւն:  
 Ոհ ինչ ահաւոր սոսկալի պատիժ

Պիտ՝ առնէ մարմին երբ ըմբօստ ապրի:  
 Արիւն տարփելի սէր իմ Սուքիաս,  
 Դեռ չեմ խեղահաս քու քարողներուդ,  
 Դեռ պէտք եմ լըսել քս որոշ խօսքեր:  
 Թերի գիտութիւն միամիտ մըաքին  
 Շատ անգամ զըժօխք կ'ըլլայ ահաւոր:  
 Երկու կըրօնից միջեւ տատանիմ  
 Ու կէս խեղադար կ'ապրիմ շուարած.  
 Մոռցայ իմ պերճանք արքունի խրախճանք  
 Մոռցայ Արգամիս նորահաս զըրկանք  
 Կըրօնքի սոսկում զիս սոսկացուցին  
 Մոռցայ հողոյս լոյս Արգամիս գէպքեր.  
 Արտաւազդ նեանց անոր կողոպուտ  
 Ես անուշազիր եղայ ծըրարիս: (Զայն ձեռքը կ'առնէ)  
 Ան հողիս Արգամ ինչ նոր նախաստինք  
 Արդեօք զեռ նորէն քեզ ըրաւ որդիս: (Կը բանայ զայն)  
 Երկինք ինչպիսի գարշելի զըրկանք  
 Գործած է որդիս անգութ ժանաժուտ:  
 Այս ծըրար իր մէջ թաղէ փառք նըշան  
 Քաջին Արգամայ վեհ փոխարքային:  
 Հայրենի սիրուն ռազմիկ քաջութեան  
 Իբըր վարձք չընչին նուէր այս ամէն  
 Թագ յակընթակապ, զինդ շըքեղ ըսպասք  
 Ոսկեկուռ, կարմիր լայքայ հողաթափ,  
 Արտաւազդ իըլած է քաջ Արգամէն:  
 Հասաւ վերջապէս որդիս խեղադար  
 Հասաւ վերջապէս իր բերտ փափագին

Մերկացուց զԱրգամ իր արդար փառքէն :  
 Եւ արդեօք ուրիշ ինչ ոճիր գործեց,  
 Այն բարի մարդուն ինչ նոր վէրք տուաւ .  
 Արգամիս պատուոյն վրէժխնդիր ես եմ,  
 Մայրական գութը ոտքի տակ առած,  
 Պիտի պաշտպանեմ վեհ արդարութիւն :

### ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

#### ԱՐՓԵՆԻԿ

Ի զ՛նւր թագուհիս անցաւ քու պատուէր,  
 Որդիդ կատաղի մազկերըս փետտեց,  
 Ծեծեց անխնայ՝ կորիր քած ըսաւ .  
 « Գընա մօրս ըսէ որ իր պաշտելի  
 Արգամի արեան յաւէս ծարաւի  
 Պիտի մընամ ես, հիմա այդ իմ որս  
 Շուտով կը հասնի, այս անգամ ցանցէս  
 Չի փախչիր Արգամ, զընա մօրս ըսէ  
 Թէ քիչ վայրկեանէն կը բարեւեմ զինք .  
 Արխնոտ ձեռքսով Արգամին գըլուի  
 Սուրիս անցուցած կու գամ ամէն բան  
 Պատմելու իրեն, կատղած մուկին  
 Կ'ուզեմ վերջին վրէժս առնել Արգամէն » :

#### ՍԱԹԵՆԻԿ

Թէ քաջ է որդիս  
 Թող նախ իմ սըրբիս  
 Մըլիէ իր ժանտ սուր :

Թատերաբեմէն Սաթենիկ դուրս կը վազէ : Ետեւէն Արփե-  
 նիկ, յուսահատ կ'ողբայ :

#### ԱՐՓԵՆԻԿ

Կ'երթաս ինքզինքդ ով տիկին,  
 Նետել բերան վիշապին .  
 Ո՛հ ինչ օրեր Հայաստան  
 Ինչ սեւ արեւ մեր աշխարհ  
 Արտաւազդի ժամանակ  
 Ինչ սեւ արեւ պիտ' տեսնայ :  
 Արտաշէսի, Սաթինկան  
 Անարժան ես Արտաւազ  
 Լինել որդի, և կորզել  
 Թագ գաւազան հայրենի :  
 Գազան վայրագ Արտաւազ  
 Պիտի զըսպե՛ս բարկութիւնդ  
 Թէ խելագար հարուածով  
 Պիտի խըլես Սաթինկան  
 Մօրըդ հողին խընկելի :  
 Միթէ ես չե՛մ պարտական  
 Իմ տիրուհւոյս ետեւէն  
 Երթալ վազել, իրեն հետ  
 Արհամարհել սուր նիզակ,  
 Լինել սիրոյ նահատակ :  
 Ախ ես ինչո՞ւ Տիրուհիս  
 Ըզքեզ մինակ թողուցի :  
 Կ'երթամ կ'ըլլամ զո՛հ պարտքիս

Կը պաշտպանեմ տիրուհիս,  
Վնյ թէ գազանն Սարաուազդ,  
Փափուկ սրտէն Սաթինկան  
Կարմիր կայլակ մը թափէ:

Դահլիճի քովընտի գոնէն ներս կը մտնէ Արփենիկի հասա-  
կակեց նաժիշտ Արմենիկը. լուրջ դէմքով կը խօսի:

### ՏԵՍԱՐԱՆ ՇԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՄԵՆԻԿ

Սաթենիկի տաճած սէրդ  
Ծայրայեղ է Արփենիկ:

ԱՐՓԵՆԻԿ

Քանի վայլեմ իմ տիրուհւոյս սէր և խընամբ  
Ինչո՞ւ չըլլայ այն իմ սըրտիս կուռք և թերափ:

ԱՐՄԵՆԻԿ

Պարտինք սիրել տիրուհին  
Բայց ոչ իբրև կուռք պաշտել:  
Դու Արփենիկ կամ կեղծես  
Կամ չես տեղեակ Սաթինկան  
Անթիւ ըստոր գործերուն:

ԱՐՓԵՆԻԿ

Մեղմիկ փափկիկ Արմենիկ  
Ընկեր նաժիշտ սիրելի,  
Մեղմիկ հընչեն քո խօսքեր  
Բայց չի խոցեն տիրուհիս:

ԱՐՄԵՆԻԿ

Թէ իմ խելքիս կը հանիս,  
Հողիս քուրիկ Արփենիկ  
Կրնանք սիրել տիրուհին  
Բայց իր գործեր սըխրազին  
Բընաւ պէտք չենք մոռանալ:

ԱՐՓԵՆԻԿ

Կեղծիք չունիմ սըրտիս մէջ  
Անկեղծութեան թեւերով  
Իջի՛ր խորերը սըրտիս,  
Արի յայտնի քո խօսքով  
Լոյս աուր խաւար իմ մըտքիս.  
Թէ Սաթենիկ չէ բարի  
Իմ ամէն սէրըս մարի.  
Թէ զինք զըսնեմ չարագործ  
Կըրնաս կոչել զիս անփորձ:

ԱՐՄԵՆԻԿ

Շողում ու կեղծ փայլայայանք  
Գիտես արդէն որ կ'ատեմ.  
Լըճակի մեր ընկերներ  
Շողմներով զըզուելի՛  
Տեսա՞ք ինչպէս երգեցին  
Սաթենիկին գեղն ու փառք.  
Անոնք հիմա միացած,  
Յաճ ու երկչոտ փրփրաբով  
Իրար պատմեն Սաթինկան

Ամէն անճաՀ վաս գործերն .  
 Կը բամբասեն համոզուած ,  
 Խիստ դատաստան կը կըտրեն  
 Անոր ամէն գործերուն :  
 Գիտցիր անոնք միացած  
 Արտաւազդի հարսին հետ  
 Կը պատրաստուն խեղդելու  
 Իրենց երգած շողոմած  
 Պանծացուցած թաղուհին :

ԱՐՓԵՆԻԿ

Եւ ինչո՞ւ :

Կը լսուին ոտքի ձայներ . երկու նաժելա ընկերները թատե-  
 րաբեմէն դուրս կը նային . յետոյ Արփենիկ հետաքրքիր շեշ-  
 տով ու տագնապած կը խնդրէ :

ԱՐՓԵՆԻԿ

Պըզտոր հոյլեր փըշեցիր ,  
 Ասկէ շուտով հեռանանք ,  
 Սոսկալի է իմ տանջանք  
 Թէ չիմանամ այն մեծ դաւ .  
 Որ կը լարուի Սաթինկան :  
 Ահա ինքը Սաթենիկ  
 Արդ հեռանանք Արմենիկ :

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Սաթենիկ էր որդւոյն Արտաւազդայ բազկաց մէջ քարշ գա-  
 ւով , շառագունած կը մտնէ թատերաբեմ :

ԱՐՏԱԻԱԶԴ

Քեզի իմ բիւր պաղատանքս ,  
 Քեզի կ'ուզեմ աղաչանքս .  
 Գլտիր ըզքեզ ըսթափէ ,  
 Կը պատմեմ քեզ ամէն բան  
 Պատճառ չի կայ խոտիլու :

ՍԱԹԵՆԻԿ

Քեզի համար ոճիր ու վաս նենգութիւնք  
 Հաւասար են արդարութեան , բարութեան :

ԱՐՏԱԻԱԶԴ

Այդ այգպէս է մայր սիրելի  
 Սակայն հիմա զըտիր ըզքեզ .  
 Գիտցիր որ սուր Արտաւազդայ  
 Մէկուն կոկորդ չի խըրեցաւ  
 Ի՞նչ է ուրեմն այնքան տանջիս :

ՍԱԹԵՆԻԿ

Հաւատմամ . . .

ԱՐՏԱԻԱԶԴ

Մայր հաւատա խօսքերուս՝  
 Որքան կարծես քու որդիդ  
 Բիրտ անսասան կամակոր ,

Բայց ինձ պատիւ չէ երբէք  
 Մըտել նենգել շողովել:  
 Քու այս տազնապ, զարհուրանք  
 Գիտեմ ուսից կը ծագի:  
 Գըտիր ըզքեզ հանդարտէ.  
 Դու կը կարծես Արգամիդ  
 Խափանեցի քեզ գալուստ,  
 Դաշունս իր փոր խըրեցի:  
 Ոչ, գուցէ այն ուրիշ օր  
 Իմին սըրէս չազատիր:  
 Կ'ըստասէի վատողի  
 Քու Արգամիդ հանդիպել,  
 Դիմացս ելաւ Սուքիաս  
 Քու հարազատ միամիտ,  
 Որ կու գար քեզ պատմելու  
 Իր Քրիստոսին հըրաշքներ.  
 Շոյեցի զինք ծաղրելով  
 Անոյշ ընդուով ճամբեցի.  
 Հիմա յուսամ հանդիսա շունչ  
 Քաշես ապրիս անխըտով . . .

### ՍԱԹԵՆԻԿ

Գուշակութիւնքդ այլանդակ  
 Ի զուր էին Արտաւազդ  
 Ինձ տեսութեան ոչ Արգամ  
 Այլ սիրելիս Սուքիաս  
 Պիտի գար ինձ որ պատմէր

Իր Քրիստոսին խըրատներ.  
 Խըտովեցաւ իմ հոգիս  
 Կարծելով որ անխընայ  
 Անոր գըլուխ ջախջախես:  
 Ապրիս որդեակ որ գըթած  
 Գըսնուեցար ողորմած:  
 Հիմա պատմէ Արգամայ  
 Կողոպուսին պատմութիւն:  
 Ծըրարդ ինքնին է վըկայ  
 Ոճիրներուդ գործ վըրած:

### ԱՐՏԱԻԱԶԳԻ

Աշխարհ հայրենի, համայն Հայաստան  
 Կարծեն համոզուած թէ ես Արգամայ  
 Փառաց արքունի եմ կոյր նախանձորդ:  
 Ոչ մայր Սաթենիկ, իմ քէն թըշնամանք  
 Արգամին տածած անշէջ ոխ մըխանք  
 Ունին աւելի խելացի պատճառ:  
 Դըրսէն թող կարծէ համայն Հայաստան  
 Թէ ես նախանձորդ եմ միշտ Արգամայ  
 Փոխարքայութեան և առաջ փառաց.  
 Հայրենի աշխարհ և ամէն վըպիր  
 Այնպէս թող կարծեն այնպէս թող վըրեն.  
 Ինձ համար բընաւ այլ նանիր կարծիք  
 Չէ անպատուութիւն այլ . . .

### ՍԱԹԵՆԻԿ

Յառաջ Արտաւազդ խօսէ համարձակ  
 Ժայթքէ անխըտով կասկածներուդ թոյն:

## ԱՐՏԱԽԱԶԳ

Գիտես սիրելի մայր դու լաւ գիտես,  
 Որ քան ըզքեզ այլ ոչ ոք կարող է  
 Գրբաւել սըրտիս կոյս անկեղծութիւն.  
 Անխարզախ սիրով վըրազ գուրգուրամ  
 Ու վառ բընութեամբ վրէժխընդիր կ'ըլլամ  
 Պատուոյդ ու փառքիդ կը զոհեմ հոգիս:  
 Գիտես պաշտելիս գիտես մայր անոյշ,  
 Փորձ ես խելահաս ամէն դործերուս,  
 Օտարին որքան ըլլամ զարհուրանք,  
 Բայց քեզի համար կ'ըլլամ հեզ գառնուկ:  
 Ճանչնալով սըրտիս ամբողջ խտոնուածք,  
 Ճանչնալով հոգոյս ամէն մութ գաղանիք,  
 Ճանչնալով տածած քեզ համար իմ սէրս,  
 Հաւատա խընդրեմ թէ իմ կազ ու կոխ  
 Ոչ ապուշ փառաց, այլ մաքուր անբիծ  
 Պատուոյդ համար լիկ կը ծագի տեւէ:  
 Մայր դու չես գիտեր թէ ինչեր խօսին,  
 Ու չար լեզուներ ինչ արզմեր քրտնն  
 Մեր արքունական զըրօշին ահեզ:  
 Արգամն այն ապուշ, իր վատ ընթացքով  
 Մոռցուց իր անցեալ փառաց արժանիք:  
 Ահեզ փըսփըսոց ամէն կողմ ախրէ,  
 Թէ Արտաշէսի տիկին Սաթնիկ  
 Գըրժեց անկողնոյ վեհ պարիեշտութիւն.  
 Շատեր բանբասնն թէ մայր Սաթնիկ  
 Ապերախա եղաւ իր հարազատին.

Մոռցաւ զԱրտաշէս ու մոլոր մըտքով  
 Անձնատուր եղաւ զազիր Արգամին:  
 Ես չի տեսայ վերջ այս անպատուութեան,  
 Ու միակ զարման գըսայ վերջապէս.  
 Վըճոնցի պատժել զԱրգամն այն մոլին.  
 Այսօր մինչ դու հոս քու ազգականիդ  
 Նոր դաւանանքի քարոզ լըսեցիր,  
 Ես իմ եզրայրներ Արգամին զըղեակ  
 Խըռովեցուցինք. իմ հայրս Արտաշէս  
 Խըլեց Արգամէն փոխարքայութեան  
 Ամէն նըշաններ. ու այնպէս անշուշա  
 Այն մոլի գազանն երբէք հոս չի գար  
 Ու չի անպատուեր Աըքունի պատիւ:  
 Թէ անսաստ մընայ իր գարշ կամքին մէջ,  
 Գիտցիր նազելիս ապահով եղիր:  
 Թէ ես անխընայ ջընջեմ անոր ճեա:

## ՍԱԹԵՆԻԿ

Արտաւազդ բաւ է, ալ զիս հանգիստ թող:  
 Տարտարոսի հուր կարծես Արամազդ  
 Կուտակէ այս հէք թըշուառ զըլխիս մէջ:  
 Հեռացիր որդեակ զիս առանձին թող.  
 Ձըսպէ քո զայրոյթ ու խելքով շարժէ.  
 Թող զիս առանձին, գնա՛ հեռացիր:

Սաթնիկ տարօրինակօրէն յուզուած կը տագնապի, մատուցելով կը հրամայէ որ հեռանայ Արտաւազդ, ասոր գութը շարժելով, կ'երթայ իր մօր ձեռքէն կը բռնէ կը խօսի:

## ԱՐՏԱՒԱԶԳ

Թէ իմ յայտնութիւն, այս անկեղծ խօսքեր  
 Քեզ պիտի հըրեն գերեզմանին մէջ,  
 Ես քեզի հետ ողջ, կու գամ թաղուելու,  
 Մայր իմ նազելի, հոգեոյս պաշտելի:  
 Արեացիք մայր, լեզուս չի սըրսկեց  
 Ոչ թոյն և ոչ շանթ. ինչո՞ւ այդպէս խեղճ  
 Զախջախուած կ'իյնաս ու սէրըս մոռնաս:

## ՍԱԹԵՆԻԿ

Հեռացիր կ'ըսեմ, որդիս Արտաւազդ,  
 Թէ կը սիրես զիս, հեռացիր հողիս.  
 Աստուածներ դաժան անէծք կը կարդան  
 Այս գազարի գըլխուս. անոնց ամենայնաց  
 Արժանի իմ ես, ոգիներ հիմա  
 Ահա զիս կապեն, ահա կը բացուի  
 Տարտարոսի դուռ. ահա կը բալեն  
 Արագած Մասիս, սարեր իրարու  
 Զարնուին փըշրին. վըհերէն կ'ելլեն  
 Գազաններ ահեզ, լուսինն ալ փըշրի  
 Կայծեր կը թափէ, ու մեր պարիսպներ  
 Շարժին կ'ամփոփուին՝ իմ վըտիս մարմինս  
 Կու գան ճըզմելու, կու գան թաղելու:

## ԱՐՏԱՒԱԶԳ

Զըզեր գըրբըռուած կ'երազէ յուզուած:  
 Մայր ես քեզ հետ եմ, ըզքեզ կը փրկեմ:

## ՍԱԹԵՆԻԿ

Գտուեմ ահաւոր տարտարոսին մէջ  
 Պայթի որոտմունք, կալանաւորաց  
 Շըղթաներու ձայն կը լըսեմ որոշ.  
 Լըսեմ վայնասուն լաց ու հառաչանք:  
 Ոչ մի հեռանար Արտաւազդ որդիս:

## ԱՐՏԱՒԱԶԳ

Երազ է մայր իմ,  
 Քաջացիք վանէ  
 Բըռնկած մըտքիդ  
 Տեսնուած չարեր:

## ՍԱԹԵՆԻԿ

Վիշապ գարշելի, ահա ահաւոր  
 Բացաւ իր բերան, թաթով ջախջախէ  
 Մարմնոյս ոսկրներ, ահա ասամներ  
 Մըխէ կուրծքիս մէջ, կը մեռնիմ որդիս:

## ԱՐՏԱՒԱԶԳ

Քեզ հետ եմ մայր իմ  
 Քու քով ինձմէ զատ  
 Զըկայ ուրիշ մէկ.  
 Զըկայ ոչ վիշապ  
 Զըկան ոչ քաջեր.  
 Ես քեզի հետ եմ  
 Մայր իմ քաջացիք,  
 Ինքզինքըդ գըտիր:

ՍԱԹԵՆԻԿ

Հասէք օգնութեան . . .

Վիշապ ահաւոր

Շալկէ զիս տանի

Տարաբրտին մէջ

Նեաէ զըլտորէ:

Սաթենիկի ձեռուները, ստունները կը գողղըղան. այլ եւս ուշաթափ կը թալկանայ, գիակնացած: Արտաւազդ այլայլած, գորովական լալկան ձայնով կը խօսի:

ԱՐՏԱՆԱԶԳ

Ձըզերն ահաւոր

Վառած բըռնկած,

Սարսափի պատկեր

Կ'երազէ իմ' մայր.

Մայր արիացիբ

Արտաւազդ որդիկ

Քիկ հեռ է յաւէտ:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Լուսնակ գիշեր: Կ'երեւի Արտաշատի գլեակի ընդարձակ գաւիթը, քովնտի արքունական սանդուխը որ կը հանէ դէպ ի թատերասրահը: Կը տեսնուի թատրոնի կիսաբոլոր շէնքը կամարակապ, լուսավառ պատուհաններով, արքունական պարտէզի պարիսպը, բրգազարդ պատշգամբ: Սանդուխը լուսաւորուած է գեղակերտ երկաթէ ջահերով: Գաւիթին մէջ պահպան զխնուորներ, ոմանք սանդուխի վրայ նստած, մէկ քանին ոտքի վրայ, այլք կը քալեն:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐԷՏ, ՓԱՌՆԱՍ, ՇԱՒԱՐՇ զխնուորները իրարու հետ խօսելով կը քալեն:

ՊԱՐԷՏ

Այս ինչ զըրկանք է որ կը կըրենք մենք.  
Շըններէն ալ ցած վարենք կեանք ըստոր.  
Կամ արեւուն տակ, կամ խոնաւ գիշեր,  
Միշտ արձանացած պիտ' հըսկենք զըրկակ.  
Համայն Հայաստան խընդուած թաարն,  
Երգեր կը լըսէ, խընդայ կը պարէ.  
Կարծես թէ մեր սիրտ քարէ է շինուած,  
Մեր ըզգայարանք փափկիկ լարելով  
Միթէ չե՞ն կապուած մեր հէք սըրտին հետ:



## ՓԱՌՆԱՍ

Թող այդ մըտածմունք․

Հիմունք հայրենի

Թող մընան անխախտ,

Փոյթ չէ մեր զըրկանք:

Թէ հայոց աշխարհ

Չունենայ ոչ մէկ

Պահապան արդար,

Ինչպէս օտարին

Կըրնայ գէ՛մ գընել

Ու պահել իր փառք

Ահեղ անոստան:

## ՊԱՐԷՏ

Ան սիրուն ընկեր, սիրելի Փանաս

Դու միշտ խըրատներ ինձի կ'սպանաս:

## ՇԱԽԱՐՇ

Դեռ հանգիսականք

Կը մնան թատրոն,

Կ'երեւի գուսանք

Հըմային զամենք:

Կ'երեւի սիրուն

Նոր պարեր բըռնած,

Կը մոգեն ամէն

Դիտող աշուրներ:

## ՊԱՐԷՏ

Շաւարշ քեզ համար գիշեր և ցերեկ

Հաւատար է միշտ, դու միշտ բընանաս.

Չես գիտեր թէ ինչ պատահի մեր մէջ,

Եւ ինչ նորութիւն ունի արքունիք:

Այսօր անսովոր տեսարան մը կայ.

Ոչ պար կամ կաքաւ այլ ողբերգութիւն:

Արքայորդին այն քերթողըն Վըրոյր

Հիւսած է չըքնաղ սղբերգութիւն նոր.

Չոր լըսեն հիմա հանդիսականներ:

Արտաւազդ աղթեց իր մօր Սաթինկան

Մահացաւ վէրքեր. արդ սղբերգութեամբ

Կ'ուզէ ամսքել անոր բիւր ցաւեր.

Կ'ըսեն թէ աիկին, սիրուն Սաթնիկ

Կը կըրէ սաստիկ ջըղային խրտուք.

Շարաթներ ամբողջ տագնապ ու զայրոյթ

Կըրէ անընդհատ, մաշուի կը հիւծի:

Գըթաց Արտաւազդ իր մօրը վըրայ,

Խընդրեց Վըրոյրէն որ իր հանճարեղ

Քընարով հիւսէ աիկին Սաթինկան

Անըման գեղոյն, պատուոյն ու փառաց

Թրթռուն ու սիրուն սսկի պատմութիւն:

Վըրոյրի քընար հիմա կը սփփիէ

Տիկին Սաթինկան հալումաշ հոգին:

## ՓԱՌՆԱՍ

Ահա Պարոյր մեր ընկեր վերապանայ թատրոնէն.

Նա շատ է քաջ իր տեսածներ ճըղըրիտ ու լաւ

(պատմելու:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՈՅՐ և եղողները: Նորեկ զինուորը սանդուխներէն իջնելով կը մտանայ ընկերներուն:

ՊԱՐՈՅՐ

Ապրի սիրուն արքայորդին,  
Ապրի Վըրոյրն այն պերճաբան:  
Էր աննրման ողբերգութիւնն  
Հիանալի հիւտուած գրբուած:

ՊԱՐԷՏ

Տեսածներուդ հետաքըրքիր ենք ամէնքս.  
Պատմէ Պարոյր ինչ որ տեսար գեղեցիկ:

ՇԱՒԱՐՇ

Լարէ լեզուդ շաղտիրատ,  
Արի պատմէ ամէն բան.  
Պարոյր, պատմէ՛ թէ ինչ նիւթ  
Երգեց Վըրոյր բանաստեղծ:

ՊԱՐՈՅՐ

Հիւլենական ամէն տեսիլ  
Ինչ որ տեսանք թատրոնին մէջ,  
Ոչ մէկ կաքաւ և ոչ մէկ պար  
Ողբերգութիւն հիւլենական  
Չէ հաւատար այն նոր տեսիլան,  
Զոր ցոյց տուաւ Վըրոյր բերթող:

ՊԱՐԷՏ

Սիրուն խօսիս դու Պարոյր,  
Զափազանցես ամէն բան.

Ինչպէս աշկերտ մեր Վըրոյր  
Գերազանցեց ըզհեւլէն:

Կարելի չէ բաղդատել  
Մեր թատրոնը անոնց հետ:

ՇԱՒԱՐՇ

Թողէք այդ վէճ աննըշան,  
Տեսնենք ինչ կայ աննրման:

ՊԱՐՈՅՐ

Ինչ որ Վըրոյր ինձ ներշնչեց իր թատրոնով  
Զայն կը պատմեմ, կարծիքս ազատ արդ լրսեցէք:  
Մայր Սաթինկան որդիք Վըրոյր և Արտաւազ  
Իրենց մօր վիշտ փարատելու նըպատակով,  
Սիրուն շըքեղ կազմակերպեն թատրոն հանդէս:  
Արտաշէսի, Սաթինկան շուրջ կը բոլորին  
Նախարարաց, աւագանի խումբ արքունի:  
Ամբոխ կոյս կոյս հսն շեղջակոյս, էր զեղաղէզ  
Անդ Հայաստան համայն աշխարհ հանդիսատես:  
Թատերաբեմ՝ կը պատկերէր գեան Ախուրեան,  
Քաղաքն ահեղ Երուանդաշատ պարբսպապատ:  
Աննրման գեղ ցոյց տար զըմբէթ մեծ սըրահին.  
Ուր ջերմութիւն ամառնային նեղէր խեղդէր  
Զարքայազունք. վերէն աշեղ գունդք նաժըշտաց  
Բլուրբելով զըմբեթին շուրջ, հովհահարով  
Փըչէին հով, ափով ոսկի կը նետէին:

Գաւթին վրայ ստորին յարկի սրահներու մէջ բանտուած  
ներու ձայնը կը լսուի, կիսաբոլոր պատուհաններէն շառաշ,  
կալանաւորներու աղմուկ, մտունչ:

## ՊԱՐԷՏ

Ժամ է Փանաս, բանտապանին  
Արի ձայն սուր, թող արձակէ  
Բանտարկեալներ, թող գան առնեն  
Իրենց բաժին հաց մի ու ջուր:

## ՓԱՌՆԱՍ

Թող որ ամէն պաշտօնաատէր  
Ազատ իր գործք տեսնէ գործէ:  
Մենք կատարենք հրահրութիւն  
Մեզ ինչ փոյթ պարտք բանտապանին:  
Պարոյր յառաջ, յառաջ վարէ  
Չըքնազ սիրուն այդ պատմութիւն:

## ՊԱՐԷՏ

Չառամ մըքքի խըրաններ,  
Միշտ բաջազեա կոպտօրէն.  
Լախա մը կուրծքիդ չի զարկած  
Հընազանդել չի կամիս:

## ՓԱՌՆԱՍ

Լրտէ Պարէա, կամք չունիմ  
Վիճել կըտուիլ քեզի հետ.  
Նորութիւն չէ այդ զագիր  
Խօսքեր լրտել քու բերնէդ:  
Պարոյր յառաջ պատմութիւնդ,  
Յառաջ վարէ զըրոյցներդ:

## ՊԱՐԷՏ

Չէ՞ք լըսեր այս ահաւոր,  
Բանտարկելոց գոռում գոչ:

## ՇԱՍԱՐՇ

Թէ շատ գըլթաս բանտարկելոց  
Ինչո՞ւ չերթաս անձամբ անձինդ  
Ազգարարել բանտապանին:  
Գընա գըլթա՛ բանտարկելոց  
Մենք կը լըսենք ինչ որ Պարոյր  
Պիտի պատմէ նորութիւններ:  
Յառաջ Պարոյր քո պատմութիւն:

Բանտարկելոց ձայնը դեռ աւելի կը բարձրանայ: Պարէա  
նեղուելու ձեռ մընեղով կ'երթայ դեպ ի բանտի կողմը:

## ՊԱՐՈՅՐ

Թանձրագըլուի Պարէա զինուոր միշտ ապշօրէն  
Արգելք կ'ըլլայ պատմածներուս համեզ ու նոր.  
Դուք կ'ախորժիք, հիացումով կ'ուզէք լրտել  
Ողբերգութեան նըկարագիր: Սիրուն կըտոր  
Վըրոյր զըրած էր իր չըքնազ թատրոնին մէջ.  
Պատկերացուց Արտաշէսի առաջին մարտ.  
Ախուրեանի եզերքը, զօ՛րք, ապին անդին  
Բըռնած, ուժգին մարտի հրաւէր հընչեցուցին:  
Երկչոտ Երուանդ իր ախոյեան ունէր զԱրգամ  
Մարաց ազգին պերճ նախարար. Կապագովկիա  
Եւ Միջագետք վարձկան զօրքով անոր թիկունք

Էին եղած, Վլրացին չէր խընայած զօրք:  
 Ահեղ բանակ ունէր Երուանդ կեղծ թագաւոր:  
 Բազրատունին քաջըն Սըմբատ չի սարսեցաւ  
 Թէեւ ունէր բանակ փոքրիկ. հայկեան փողեր  
 Որտացին, լեռներ ձորեր երկինք ամպոս  
 Պայթեցուցին արձագանդ գոռ բամբ բարկածայթ.  
 Բայց զօրութիւն, Սըղամայ ահ երկիւղ սարսափ  
 Չըղէր ի գունդ հայկեան գունդին Արտաշէսի:  
 Արքայն Հայոց տալ խոստացաւ Մար Արգամայ  
 Փոխարքայի աւագ պատիւ, թէ գայ խառնի  
 Հայկեան գունդին ինքն իր զօրքով ահեղասաստ:  
 Արգամ խիզախ պերճ նախարար, անսոց Հայոց  
 Թագաւորին. հայկեան բանակ ահեղագօր  
 Կըռիւ մըղեց. գոռ Արտաշէս, Սըմբատ արին  
 Ահեղն Արգամ նուաճեցին գունդ Երուանդայ:  
 Պատերազմի սոսկավիթիսար այն տեսարան  
 Լաւ էր հիւսած Վլրոյր քերթով իր քընարով:  
 Արքայորդին մեր բանաստեղծ լաւ նըկարեց  
 Երուանդայ վառ փախուստ սոսկում կընամարդի:

Կը լսուի շլթայներու ձայնը: Շեռուէն բանտարկելոց աղա-  
 դակը կը բարձրանայ. խառն աղմուկներ կը լսուին:

### ՇԱՒԱՐՇ

Թէեւ հասնին բանտարկեալներ,  
 Սակայն Պարոյր շարունակէ  
 Վլրոյրի այդ սղբերգութիւն:

### ՊԱՐՈՅՐ

Հրաշագեղ գեղանըկար, պերճասեսիլ գեղեցիկ,  
 Տեսիլ վեհ ի ցոյց զբաւ Վլրոյր քերթով պեր-  
 (ճարան.  
 Սոսկացին հանդիսականք, երբ զըննեցին մարտի  
 (դաշա.  
 Երուանդայ զինուորներ օրհասական հաշման-  
 (դամ,  
 Տառապեալ, հառաչէին հայոց ձիոց օտից տակ:  
 Խայտացին, հանդիսականք երբ զխեցցին կործա-  
 (նում  
 Քաղաքին Երուանդաշատ և ըսպանում Երուանդայ:  
 Անպատում և աննըման էր տեսարան այն գող-  
 (արիկ  
 Որ ըզկուր նըկարէր գեա, և հարսնութիւն փափ-  
 (կանազ  
 Օրիորդին Ալանաց: Ի տես այդ նուրբ պատկերին,  
 Լան ամուլք Արտաշէս, խարտիշագեղ Սաթենիկ:  
 Վերջին պատկեր սղբերգութեան արքայորդի քեր-  
 (թողին  
 Չի տեսայ. այժմ գուսանք և զերասանք քա-  
 (ջալարժ,  
 Կ'երգեն խըլեն ըզմայլոզաց հեռաքըրքիւ հիացում:  
 Գուշակեմ թէ չի տեսած իմ այդ տեսիլ՝ գե-  
 (րազանց  
 Պիտ՝ ըլլայ քան զառաջին երկու վըսեմ պատ-  
 (կերներ.

Այսպէս ինծի կ'ըսէին ողբերգութեան քաջ տեղեակ  
 Բարեկամներ քերթողին հանդիսատեսք փորձերուն :  
 Փութացի իմ պաշտօնիս . թողի չըքնաղ այն կըտոր .  
 Այլ բաւ է մեզ շաղփաղփել . ահա շարժին բան-  
 (տարկեալք .  
 Բազմացուցէք զինուորներ , հըսկենք խըսախ  
 (զապըստամբներ ,  
 Պահենք պատիւ զինուորական , զըսպենք զանոնք  
 (քաջութեամբ :  
 Բացէք զըոներ խոհանոցին , բերէք բաժին բան-  
 (տարկելոց .  
 Բաժնեցէք միս նըրկանակ , ջուր զինեխառն զովա-  
 (ցուցիչ :

ՇԱԽԱՐՇ

Ի կարգին է ամէն բան ,  
 Ահա կու քան խոհարարներ ,  
 Բերեն ուտեստ բանտարկելոց :  
 Յանցաւորաց կապանք սաից  
 Պէտք ենք ուժով ամրացընել .  
 Վախեմ անոնք զայրանալով  
 Կը վըրդովեն թատարոնականք .  
 Իրենց գոռում գոչում , զայրոյթ ,  
 Աըքունիքի դէմ աղաղակ  
 Ըմբոստութեան են նըշաններ :

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Գաւթի մէկ քանի դռներէն կը բերուն խորոված եզանց  
 խոշոր կտորներ , սապատներով հաց : Գաւթին աւազանները  
 պաղ ջրով կը լեցունին : Տիկերով գինի կը բերունին : Կը բազմա-  
 նայ լուսավառ ջահերու թիւը : Կը լսուի բանտարկելոց ահե-  
 ղագողորգ մոունչը . շղթաներու շառաչը : Չինուորներու հակողու-  
 թեամբ բանտարկեալները գաւիթ կը մոնեն , խիզախ , վայ-  
 րագ աշուճներով ասդին անդին կը դիտեն . շունին ժպիտ , այլ  
 գազան տեսիլ : Ոմանք ծալապատիկ գետին իրար քով կը նստին :  
 Կը սկսի կերակուրի բաժանումը . բանտարկեալներէն շատերը ,  
 առանց կարգ կանոնի ուշադիր ըլլալու , իրենց ձեռքով կ'եր-  
 թան կը բզբտեն եզան մեծամեծ կտորները , սոված գազաններ-  
 բու պէս կը յոշոտեն մտի պատառները , տկերը կը յափշտա-  
 կեն կը խմեն անյագաբար . զինուորներու գիմադրութիւնը  
 բանտարկելոց զայրոյթը կը բռնկցընէ , անոնք դեռ աւելի կա-  
 տաղաբար կը պրոսան , կը պրոսըտան , կերած մսերու խոշոր  
 ոսկրները կը նետեն գիմադրող զինուորներու գլխին , ոսկրնե-  
 րով կը պատերազմին . կը բազմանայ զինուորներու թիւը : Կեր-  
 ուխումի ատեն բանտարկեալները միաբերան կ'երգեն :

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ :

Գոռ բարկաճայթ , դոփենք , զոռանք որոտընդոտ  
 (բողոքներ .

Արին հրացայտ ֆըշացընէ մեր երակներ զայրացած :  
 Չենք ուղեր ճանչնալ ոչ թազ հայրենի ,  
 Ոչ օրէնք , կապանք ըստրուկ ազգերու :  
 Խըղենք մեր կապանք , ջախջախենք շըղթայ ,  
 Կործանենք բանտեր , շընչենք ազաա օ՛գ :  
 Խուժենք բանաէն , ըմբոտս ընկերք .  
 Կտարենք փըշրենք բանտի դըռներ .

Գոռ գոռալուլ տապալենք  
 Օրէնք և թաղ բընակալ:  
 Մեր սուր ժանիք կըրծեն կապանք,  
 Մեր բարկութիւն հալէ շըղթայ:  
 Կոփենք կըտփենք  
 Բանտի դըռներ,  
 Գըտանենք մեր սուրբ  
 Ազատութիւն:

## ՇԱԽԱՐՇ

Ազատութիւն ամէն սըրտի է տենչալի գաղափար.  
 Գոռաք գոչէք բանտարկեալք, խընդրէք ազատ  
 (շնչել օդ:  
 Ազատութեան այդ տենչանք, մարել երբէք չենք  
 (կարող.  
 Բայց և բընաւ օրինաւոր և իրաւունք չէ արդար,  
 Չորոշել վատըն բարիէն զանազանել իրաւամբ.  
 Չարին պատիժ եթէ չըլլայ, բարիներուն հաւասար  
 Չարն ալ եթէ չընչէ բարւոյն ազատութեան վարձքն  
 (արդար,  
 Խախտի ամէն սուրբ իրաւունք, արդարութիւն  
 (ըղձալի:  
 ԲԱՆՏԱՐԿԵԱՆԿ  
 Խնչ է չարիք  
 Այդ իմաստակ  
 Բառ — Չարութիւն:  
 Կատաճ առն

Թէ մենք գործենք  
 Այլոց վընաս,  
 Կըրակ արիւն  
 Ըզմեզ մըզէ  
 Գործել այլպէս:  
 Ամէն անհաս  
 Կ'ուզէ ըլլալ  
 Բարի արդար.  
 Բայց ամէնուն  
 Բընաւ նըման  
 Եւ հաւասար  
 Չէ պարզեւուած  
 Արիւն հանդարտ:  
 Քանի սիրենք  
 Ազատութիւն  
 Պիտ' անիծենք  
 Մեր գերութիւն:  
 Սըրենք ահայ  
 Կըրծենք շըղթայ  
 Եւ գերութեան  
 Կապանք անգութ  
 Հալենք շունչով  
 Մեր բոցաշունչ:  
 Յաւէա անէծք  
 Պիտի կարկանդ,  
 Ըզմեզ կապող  
 Բընաւորաց:

Արտաշատի  
 Ահեղ պարիսպք.  
 Ամպած ըրար  
 Գոռոզ գրդեակ,  
 Փըլլին, փըշրին  
 Ըլլան փըշուր,  
 Ըլլան աւազ,  
 Էւ ոսնակոխ:  
 Արքունական  
 Այս սէգ ոստան  
 Շանթով երկնից  
 Թող սասանի:  
 Սասանական  
 Ազգն անխընայ  
 Զնչէ ամբողջ  
 Արխն և ճեա  
 Արտաշէսի:  
 Տեղա՛ երկինք.  
 Տեղա՛ գըժոխք  
 Կայծակ կըրակ,  
 Լափէ ոստան  
 Բըռնակալին:  
 Վառին ջընջին  
 Օրէնք ու թագ,  
 Կանգնի հին կեանք  
 Ազատութիւն,  
 Մըշակութիւն:

Ազատ կամքով  
 Շնչել գործել,  
 Ազատ կամքով  
 Գործել ապրիլ:

## ՓԱՌՆԱՍ

Այդ ինչ պոռչաուք հաջէք լըրբօրէն,  
 Անէծք կը կարգաք գըլխին արքային.  
 Նա սիրելի է, սիրոյ արժանի,  
 Քան զամէն արքայ Հայոց աշխարհի:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ

Կատենք զինքը միշտ,  
 Քանի ինք եղաւ  
 Օրէնք ապօրէն  
 Հաստատող մեր մէջ:  
 Հայը միշտ ըմբոստ  
 Եղաւ ի ծընէ.  
 Մերժեց Ներքովդայ  
 Ըլլալ հըրպատակ:  
 Մեզի մեր նախնի  
 Նահապետական  
 Կեանքն է սիրելի:

## ՊԱՐՈՅՔ

Զարժէ ով ընկերք վիճել ասոնց հեա.  
 Բաց են զընտանին երկաթէ գըռներ,  
 Քըշեցէք զիրենք իրենց արժանի

Խաւար ու խոնաւ տարտարոսին մէջ,  
Թե՛ ունին բողոք թող հոն որոտան,  
Ճըւան ու հաջնն բառաչնն ազատ:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ

Լեռնական բիրտ զինուորներ,  
Չէք դատաւոր մեր բերնին,  
Շըլթայ զարկիք մեր սաքին  
Բայց ըսարուկ չէ մեր լեզուն:  
Ազատութիւն յաւիտեան  
Որոտընդոտա կը գոռանք,  
Ազատ լեզուով անգաղար  
Բընաւորներ կ'անիծենք:

## ՊԱՐՈՅՐ

Բանտապաններ օ՛ն տարէք,  
Յանցաւորաց այս խըմբակ.  
Տարէք զընտան նեանցէք,  
Հոն բողոքներ թող մընչեն:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ

Չինուոր կոպիտ լեռնական  
Կարկէ, քաշէ քեզ լեզուդ.  
Կուսի գանկիդ լախտօրէն  
Կ'իջնէ կոտրէ ջախջախէ:

## ՓԱՌՆԱՍ

Թողէք հանգիստ բանտարկելոց այս խըմբակ,  
Մենք չենք կարող զըսպել իրենց չար լեզուն.

Ազատութեան այս ժամերուս, ազատ են,  
Հանգիստ զուարթ խընդալ, դոտալ, հայհոյել.  
Ուշադրութիւն թըշուառնեբու եղեանց  
Պէտք չենք զընել բանի որ ենք խելահասք.  
Հըրաբուխ է բանտարկելոց այն բերան,  
Որ զուրս նեաէ գոռ պայթուցիկ բողոքներ:  
Թողէք երզնն ազատութեան այս ժամուս,  
Թողէք թափնն իրենց զայրոյթ յուսահատ:  
Պէտք չէ մոռնալ ընկերներ,  
Պատուէր հրաման արքային.  
Պէտք չէ մոռնալ Սաթիկան  
Յատուկ աղերս գըթառատ,  
Բանտարկելոց այս խըմբին  
Տալ այս ժամուս խըրախճանք:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ

Բերէք զինի, ուրախանանք,  
Վառենք զայրոյթ, խիզախութիւն.  
Մենք չենք մոռնար մեզի եղած  
Այն զըրկանքներ անգըթօրէն:  
Արքունական այն ամուլներ  
Վայրկենաբար ազատութիւն  
Կը պարգեւեն մեր ակըմբին.  
Թե՛ կը գըթան մեզի և մեր  
Ողորմ թըշուառ զաւակներսն,  
Թող արձակեն ըզմեզ բանտէն:  
Պարպենք զինի ու չի մոռնանք  
Ամէն զըրկանք և ընտանեաց



Ողորմ՝ ահեղ աղքատութիւն:  
Պարսկներ զինի, աղատութեան  
Հազար օրհններ և գերութեան,  
Կարգանք, դոսանք հազար անէծք:

## ՊԱՐԷՏ

Թագաւոր յեհանձն՝ ահեղ թագուհին  
Յիշեն ողորմին ձեզի բանտարկեալք.  
Ախ ձեր կուրծքին մէջ՝ փոխանակ սըրաի,  
Կարծես է բուսած կոշտ ժայռ ապառաժ.  
Ինչո՞ւ կը մոռնաք երախտիք յեհին  
Ու անոր գըլիին անէծք կը կարգաք:  
Կարծես բընական, բիրտ ապշութիւն է  
Երախտաւորներ հալածել յաւէտ,  
Ապերախտ ըլլալ գըլթոս սըրաերու,  
Մոռնալ երախտիք երախտաւորաց:

## ԲԱՆՏԱՐԿԵԱՆՔ

Կարծես ամէն զինուորներ,  
Չագուկներ են քուրմերու,  
Իրենց բերնէն չենք լըսեր  
Բառ մը խիզախ կըրակոտ.  
Թոյլ ողորմուկ խըրասաներ  
Բարոյական կեղծաւոր՝  
Կը քարոզեն յորպորներ:  
Բաւ է արխմար պահակներ  
Բաւ է այնքան բաջաղանք,  
Թէ բարի էք ողորմած,

Բացէք բերան տիկերուն.  
Առատ զինի բաժնեցէք:  
Գինի խըմներ ընկերներ  
Բընութեան դէմ վառներ սիս.  
Գերութիւնն իս բողոքներ:  
Քանի շըղթայ կը կըրներ,  
Թող չի մարի մեր զայրութ.  
Անէծք հառաչք խըրտացած,  
Ժայթքի յերկինք դէպ ի վեր,  
Կակղի սիրաբ աստուածոց  
Մեր հէք սըրաին մարեն բոց:  
Արդարութիւն հոգի վեհ  
Թէ գոյութիւն ունիս դու,  
Ըզքեղ յաւէտ սոկի կուռք  
Պիտի պաշտներ ու յարգներ.  
Ըզքեղ երբէք չի տեսներ  
Արդարութիւն տենչալի,  
Արի ելի՛ր քառսէն  
Տըղմի փոսէն վեր հանէ  
Բընաւորաց նեխած սիրա:

## ՓԱՌՆԱՍ

Լըռեցըներ ընկերներ,  
Ասոնց խօսքեր սանձարձակ:  
Հեռուն ըստուեր մը շարժի,  
Կարծես պահակ մը կու գայ:

Ամբողջ բազմութիւնը զինուորները և բանտարկեալք թա-  
տրոնի սանդուխներուն կը նային, կը մօտենայ պահակն Չարեհ:

## ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

## ԶԱՐԵՆՆ

Ձահեր հրացայտ, բոց վառ ի վառ,  
Վառեցէք ջահ. թող բազմանան  
Թիւ դամպարաց և լապտերաց.

Ահա շուտով հասնին կ'անցնին  
Խումբ արքունի և հանդիսականք,  
Համայն ամբոխ, գուսանք պարողք,  
Դաս քրքմականք գունդք զինուորաց:

## ՇԱԻԱՐՇ

Բարի բանտարկեալք, անձայն անխրտով,  
Խընդրենք հեռանալ և զարձեալ մըտնել  
Նրկուզներուն մէջ. գառն է ձեր վիճակ  
Գիտենք թշուառ էք, սակայն ըստփիւս  
Ըզձեզ կարելի հընար չէ բընաւ:

Մենք ունինք պատուէր, մենք ալ ձեզի պէս  
Ըստրուկի նըման ամէն հըրաման՝  
Պէտք ենք կատարել, հընազանդեցէք  
Անձայն անխրտով արիք զընացէք,  
Մըտէք ձեր ահեզ չարատանջ զընտան:

## ԲԱՆՏԱՐԿԵՍԱԼՔ

Մեր արիւնն որքան լիզի գառնութեամբ  
Է ժանտ ու զաղիր գարձած վայրագցած,  
Սակայն կ'իմանանք քաղցըր խօսքերու  
Հմայք մոգական. օձը ժանտաժուս

Սիրէ անուշ կաթ ու մենք իժացած,  
Անուշ խօսքերու անհշանք ծարաւցած:  
Ազմուկ աղաղակ, հաննէն է ի գուր,  
Բընի, բընակալ, անգուլթ հարուածով  
Գիտենք թէ ձեր գունդ ըզմեզ կը նեակէ  
Դարձեալ այն մըթին ահաւոր զընտան:  
Թէ մեր աղաղակ անհաս է կըրոց,  
Ինչո՞ւ պատըտենք մեր հիւժած թոքեր:  
Չըրկանքներու պէմ պիտի բողոքենք.  
Թէ կան աստուածներ արգար ոգորմած,  
Թող իրենք կըտրեն ուղիդ գատաստան:  
Գիտենք բընութեամբ՝ վարէք ըզմեզ բանա,  
Ինչո՞ւ ապշօրէն ուսենք կուտի ապտակ.  
Թէ մեր ոտուըներ ըլլային արձակ,  
Ըստոր հըլութիւն հըպատակութիւն  
Կ'ատէինք յաւէտ, կըրուէինք ըմբօստ:  
Իժն է ահաւոր, կարող է սակայն  
Մարդուն ոտքին տակ գործել զարհուրանք:  
Քանի կը կըրենք կապանք մեր ոտքին,  
Չունինք ուրիշ ուժ, միայն հայհոյենք,  
Բըրդինք ի գայրութ, ողբանք մեր օճախ,  
Կարօտով յիշենք կին, ծընողք, գաւակ.  
Յիշենք ու թափենք կըրակ արտասուք:  
Պահակ զինուորներ քըշեցէք ըզմեզ,  
Հա նորէն ըզմեզ նետեցէք զընտան . . .  
Երթանք ընկերներ, երթանք հիւժելու.  
Թունաւոր զընտան մեր կեանքին յետին

կաթիլն իսկ կ'ուզէ ծրծել յագենալ:  
 Երթանք համակամ, առանց բըռնութեան,  
 Սակայն յոյսի լոյս երբէք չի մարենք:  
 Աղերս կամ բողոք ցամքած շըրթունքով  
 Յաւիտեան հընչենք երբէք չի մոռնանք,  
 Արդար դատաստան խընդրել արքայէն:

ՇԱԽԱՐՇ

Շատ լաւ կը դատէք, խելացի խօսիք,  
 Թըշուառ, ողորմուկ կալանաւորներ  
 Կարող էք յաւէտ խընդրել դատաստան.  
 Արդ ժամ է թողուլ այս ձեր վաղանցուկ  
 Հանդիստ խըրախճանք: Կ'երևի թափօր  
 Հանդիսականաց խաժամուժ ամբոխ:  
 Արիք ընկերներ դէպ ի բանախ դուռ  
 Առաջնորդեցէք այս խելճ կապուածներ:

ԲԱՆՏԱՐԿԵՍԱԼՔ

Բըռնի համակամ, նհուունք ի զընտան,  
 Խայտան ու ցընճան այլ հանդիսականք:  
 Բաղդին անողոք վըճիտ սոսկալի  
 Դեռ չէ ջընջուած մեր սեւ ճակատէն:  
 Արդարութիւն օ'ն ալ մոռնջ մի կենար  
 Խընդրէ պահանջէ մեր սուրբ դատաստան:

Այս երգով բանտարկեալները կը հեռանան կը մանեն բանտ:  
 Զինուորներէն մէկ քանին կը քնան գաւթին մէջ. առաջնորդող  
 զինուորները շուտով կը վերադառնան, և իբրեւ պահապան  
 պան ասդին անդին սանդուխներու վրայ կը ցրուին:

ՏԵՍԱՐԱՆ ՇԻՆԳԵՐՈՐԴ

Հանդիսականք թատրոնէն դուրս կ'ելլեն: Ամենէն առաջ կը  
 տեսնուին փողահար զինուորները, յետոյ սաղաւարտախորիստ  
 տիգակիր զինուորները: Արտաշէս ու Սաթենիկ ականակուռ ու  
 շաւլ զգեստներով պճնազարդ՝ բազմած են պատգարակի  
 կարմիր թաշէ ոսկեհիւս ծածկոցներու և բարձերու վրայ: Պեր-  
 ճատեսիլ, բարձրահասակ, թխամորթ մանկուաւիկներ շաղկած են  
 այդ պատգարակը, որուն առջեւէն Սաթենիկի վերջին որդին՝  
 կ'առաջնորդէ զոյդ մը պահապան թաւամաղ շներ. Սաթենիկ  
 անոնց վրայ ակերով ոսկի փաշի ցանած է. կենդանիները անո՞  
 նով գեղապաճոյճ հրապոյր մը առած են և կը ցոլացընեն շա-  
 ցուցիչ ճառագայթում մը: Պատգարակի ետեւէն կու գան  
 Արտաշէսի հարձերը՝ շաւլօրէն զարդարուած, զասոնք պա-  
 շարած են հրեայ պառաւ նախշոտներ՝ համակ սպիտակ հա-  
 դուած: Հարձերը նախանձորդ աչքով կը նային դղեակի մայր  
 թագուհիին. վասն զի Արտաշէս դերազանցօրէն կը սիրէ զՍա-  
 թենիկ իր հարազատ հարսը, Հայաստանի օրինաւոր թագու-  
 հին: Հարձերէն վերջը կը տեսնուին նախարարական դասակար-  
 դը. կ'երևի Սաթենիկի եղբայրը ճերմակ պարեգօտ և կա-  
 նաչ ծիրանիով. Սմբատ Բագրատունի խիզախ դիմագծով՝  
 վրան առած է կարմիր ծիրանի: Սաթենիկի ազգական նոր քրիս-  
 տոնեայ դարձած Սուքիաս թխամօրուս, մանիշակագոյն զգես-  
 տով: Ասոնց հետ են Արտաշէսի որդիքը՝ Արտաւազդ, Տիրան,  
 Մաժան, Զարեհ, Տիգրան, Վրոյր և այլն: Արտաշէսի արբու-  
 նական մատաղատունկ մանկիկ դրանիկները՝ աղանձիճ քաղ-  
 ցրաբոյր սրբազան ջուրը սրսկելով, կը մեծարեն Մոգպաշտե-  
 քամալեօտը, որուն հետ են Արտաշատի ամբողջ անուգ և ե-  
 րիցագոյն քրմականները, ամէնն ալ մեհենական ճերմակ մե-  
 տաքսէ պարեգօտ մը կը կրեն, զլուինին նոյնպէս սպիտակ  
 թաշկինակ մը դափնեպակով: Քրոմբերու ետեւէն կու գան  
 արքայորդիներու զաւակները, որոնց հետ են նախարարներու  
 տղաքները: Յետոյ կու գան արքունի դրան պահապանք՝ Սա-

տանիկ գունդը և խումբը խումբը նաժիշտներ, ներքինիներ և բազմախուռն թատերատես ժողովուրդը: Թափորը երկայն, շողշողուն մարդկային շղթայ մը կազմած է: Ամբոխին մէջ եւս կը գտնուին ջահակիրներ: Արքունական պարտեզի պատշգամէն Արմենիկ և Արփենիկ կը դիտեն այն գեղեցիկ թափորը: Փողաչար զինուորներու, քրմականներու և նաժիշտներու երգերը անընդհատ են:

ՆԱԺԻՇՏՆԵՐ

Յիշեց Սաթմենիկ

Քննքուշ հարսնութեան՝

Ոսկի մարգարիտ

Տարափող օրեր:

Յիշէ՛ Սաթմենիկ

Դարձևալ նոյն օրեր,

Քանի գարուններդ

Բարդին բազմանան,

Քանի պատկառանք

Գորայ՛ անսահման՝

Ներշնչես համայն

Հայոց աշխարհի:

ՆԵՐՔԻՆԻՔ

Սաթմենիկ տիկին, հայրենի աշխարհ

Գեղովըզ պարծի, խրոխտայ հիացած.

Ըզքեզ տիրուհի, պերճ աստուածուհի,

Պաշտենք ու պաշտեն հողիք նազելի.

Չարեր ու քաջեր աչքիդ շանթարձակ

Կայծով ահաբեկ կ'իյնան շանսասակ.

Փախէք սեւ ծընուցք զարշ տարտարոսի,  
Քաջեր ու չարեր մրաէք ձեր վըհեր:

Աշխարհ Հայաստան, ամբողջ արքունի  
Եւ մեհնական ահեղ զօրութիւն՝

Ի սէր Սաթմենիկան արիւն կը թափեն:

Մասխու սարեր բացէք ձեր բերան,

Բանտեցէք այն վատ չարեր ու քաջեր

Որ տանջեն լըլկեն փափկիկ Տիրուհին:

ՔՐՄԱԿԱՆՔ

Մոռցան աստուածներ, Արամազդ ահեղ,

Խըրոխտան Ապոլոն, գեղալին Անահիտ,

Դիք և գեղուհիք՝ մոռցան Սաթմենիկան

Կըրօնքի զըրժանք. յիշեն միմիայն

Իր գեզն աննըման, յիշեն Սաթմենիկան

Ոսկեհիւս օրեր, կ'օրհնեն Սաթմենիկան

Շըքեզ պանծալի յիշատակ մեղուշ:

Մոռցիր Տիրուհի այն թոյն փոթորիկ,

Որ չար ոգիներ զըլխիդ կու փըշեն:

Մերժէ քաջերուն տըրմար յարձակում՝

Յանուն Անահայ հալածէ զանոնք:

Փարէ քո նախկին կրօնքին հարազատ:

ՆԱԺԻՇՏՆԵՐ

Կապոյտ երկընքի հարս բամբել լուսնակ,

Մոռցիր աստղերու բեզ երգած մըրմունջ.

Հեռացիր ըզքեզ զըրկող ամպերէն,

Արծաթիկ բեկբեկ նըրբահիւս շողով

Կախուէ Սաթինկան պերճ գըլխին վըրայ,  
 Հարցուր սըրտայոյզ քեզ համբոյր առուղ  
 Զեփուռն հարցուր, թէ հայ հայրենիք  
 Տեսաւ Սաթինկան նըման ուրիշ հարս,  
 Գեղով նազելի, սըրտով փարելի:  
 Հարցուր լըութեան մէջ հսկող ծաղկանց,  
 Թէ ինչքան հըրճուին, երբ մեր Սաթենիկ,  
 Զերդ գրախաի հուրի, փափկիկ թաթերով  
 Զիրենք կոխկըրտէ ճեմէ սիգածեմ:  
 Հարցուր լըութեան, թէ խաւար եթեր  
 Ինչքան կոծէ լայ, երբ մեր Սաթենիկ  
 Մընչէ հառաչէ սըրտէն ախ ու վաշ:  
 Արծաթ աչերովդ ախ գիտէ լուսնակ,  
 Տես որքան գորով Հայաստան աշխարհ  
 Խնկէ կաթողին Սաթինկան աչեզ:

Այս երգերով թափօրը առաջ կ'երթայ, ամբօխը թատե-  
 րաբեմէն շի անհետացած, կ'իջնէ վարագոյրը:

#### ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ



## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարան. Խաղկոտն լեռներ, ընդարձակ ծաղկազարդ դաշ-  
 տեր, հովիտներ, Եփրատայ ակունքներէն ճիւղ մը: Թատերա-  
 բեմին ճակատը կը տեսնուին խիս առ խիս անտառներ: Հո-  
 րիդնը՝ լեռներու շղթայ, արշալոյս կարմիր ծիրանեգոյն,  
 ասող մը փայլուն որ երթալով կը նուազի: Աջակողմը լայնա-  
 բերան դէպ ի հանդիսականաց նայող ընդարձակ բազմախորշ  
 բարայր մը: Զախակողմը, Սուքիասանց մկրտուած աւազանը  
 ծաղկած թփերով շքապատուած: Բլուր մը վրան խաչափայտ  
 մը անկուած:

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՍԱԹԵՆԻԿ, ՍՈՒՔԻԱՍ. — Սուքիաս՝ Սաթենիկի դողդո-  
 ջուն ձեռքը բռնած, կը մօտենան աւազանին: Սուքիաս հա-  
 գած է ճերմակ պարեգօտ մը, ուսերուն վրայ նետեր է թաւա-  
 մազ ոչխարի ստեւ մը, ստուշները մերկ: Սաթենիկ վար-  
 դագոյն գգեստով, գլուխը ծածկած է մետաքսե սպիտակ թաշ-  
 կինակով: Սուքիաս Սաթենիկի ցոյց կու տայ աւազանը:

### ՍՈՒՔԻԱՍ

Տես աւազան, մըկըրտարան  
 Իմ և համայն ընկերներուս.  
 Հոս բացուեցաւ իմ կեանքի գրախտ.  
 Ու ախար կենացըս կոագարիշտ  
 Հոս հալեցան: Շողաց յերկնից

Լոյս սրբենի, փայլակ հողի  
 Հազաւ մարմին մեր եղկելի.  
 Մէն մի ընկերք այլակերպեալ,  
 Տեսիլ տեսաք պատկեր չըքնաղ.  
 Տեսանք բըլուրն այն խաչակիր,  
 Ուր նոր Աստուածըն Մեսիայն  
 Ոսկեճաճանչ, ախանախա,  
 Շողով հըրաւ, կայծ հըրացայտ,  
 Երեւեցաւ մեր աղբմբին:  
 Ես երբ յիշեմ աստուածային,  
 Տեսիլ վըսեմ աստուածահըրաչ,  
 Սոսկամ փարլմ Մեսիային:

## ՍԱԹԵՆԻԿ

Ոհ ինչ հըրապոյր ներշնչեց  
 Քեզ Մեսիայն Աստուած նոր,  
 Ինչո՞ւ ինծի նոյն բարին  
 Կայծ մը հաւատք հաստատուն  
 Հէք սըրբախ մէջ չի կաթեց:

## ՍՈՒՔԻՍԱ

Հաւատքի կայծ շողարծաթ,  
 Հաւատարմով շողշողայ.  
 Քանի փակես սըրբաիդ աչք,  
 Լոյս չես տեսներ Սաթենիկ:  
 Հաւատաւ ինձ քոյր չըքնաղ,  
 Խօսքիս անսա՛. աներկմիտ  
 Մեսիային կըրօնքին

Թէ հաւատաս համոզուած,  
 Տեսնես հողիդ թեթեւցած.  
 Կը վայելես անարատ,  
 Կենաց հեշտանք անպատում:  
 Մասեաց քաջեր սոսկալի,  
 Այլ չեն կարող քեզ լըլկել.  
 Խաչանիշով հըրաշագործ,  
 Զանոնք դըժոխք կու թափես:

## ՍԱԹԵՆԻԿ

Ի՛նչքան ճարտար, լեզու սնին Սուքիաս  
 Հիւսես վէպեր, առասպելներ հըրաշահիւս:  
 Լըսեմ շըշուք երիվարաց սանատրոփ.  
 Լըսեմ դանդիւն՝ որսականաց քաջաւլազ:  
 Արի թաքչինք՝ եզբայր սիրուն Սուքիաս.  
 Թէ հոս ըզմեզ առանձնացած տեսնեն այլք,  
 Կասկած ահեզ անմըտօրէն կը ծագի:

Քարայրին կողմնակից, վիմափոր խոռոչներուն մէջ կը ծածկուին երկուքը:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Քարակներ (որսական շներ) շորս հինգ հատ արագավազ՝ կ'անցնին կ'անհետանան անտառներուն մէջ, ասոնց ետեւէն կը ճախրեն ճիւղերնէր՝ Արտաւազդ, Վրոյր և ուրիշ որսորդներ արքունի և նախարարական տներէն: Թատերաբեմին վրայ չեն մնար, հազճեպով կը սուրան, կը մտնեն անտառ, կը կորսուի անոնց հետքը: Վարայրէն կ'ելլեն մէջքերնին ոչխարի ստեւով ծածկած մերկամարմին թաւամազ շորս անապատականներ. ասոնք Ոսկեանց ճգնաւորներէն են: Կու գան ծաղկազարդ դաշտին վրայ, ու գետնամած գէպ ի արեւելք գարցած, կ'աղօթեն:

## ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Թէ մեզ պարգև երկնային,  
Պակսի և չինք քաջ գուտան,  
Սակայն մըրմունջ հագնեմայլ  
Մընչէ մեր սիրտ մեղսամած:  
Ասարդ վերջին գիտապեա,  
Աըշալոյսի ծով ծիրան,  
Յայտէ ի մեզ կայծ հըզոր,  
Դիտենք ահեղ հըրացայտ  
Դրախտի պատկեր անպատում:  
Առաւօտեան մեր աղօթք,  
Վարդ մանիշակ ամպերէն  
Անցնի հասնի առ Աստուած.  
Չունինք մոգիչ այն քընար  
Որփէսսի նազերգու.  
Արիք հրեշտակ փողահարք

Հասէք մեզի օգնութեան,  
Երգենք սնուչ առ Աստուած,  
Առաւօտեան սուրբ մաղթանք:

Կը խոնարհին գետին, ճակատին ծաղկազարդ կանաչութեան վրայ դրած, երկիւղած գիբքով կը մնան, քարայրի բերնէն նեղքին ճգնաւորներու աղօթքը կը լսուի:

## ՆԵՐՔԻՆ ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Գողթան քընար՝ լըռեն յաւէա մեզ համար.  
Ծընծղայ կոչնակ, սանթուռ քընար բամբուհար  
Դասք հրեշտակաց հընչեցընեն երկիւղած.  
Արիք ընկերք, երգենք, օրհնենք սոսկալով,  
Խընկենք աղօթք, սըբտով երգենք զԱրարիչ:

Նեղքին և արտաքին ճգնաւորները ներգաշնակ, միարեւան կ'երգեն:

## ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Հասէք հրեշտակ ամպերու ծայր,  
Հընչեցուցէք բամբուռ քընար:  
Ճախրէ խըրտիտ արծիւն ի վեր  
Հնչէ աղօթք իր սուր կըրիչք.  
Տատրակ թողու նազուկ իր որջ,  
Սուրայ, լուղայ արծաթ թեւով,  
Մեղմիկ զոտայ վուլու աղօթք:  
Հայոց ափունք, հայոց գետակ  
Առ քեզ Աստուած Արարատեան՝  
Չեն հասցըներ Աղկիտնի  
Ողբերգու ձայն. թըփեր ծաղկած

Ծակղտան երկրիս, ունի ստիսակ  
 Փառացի երգիչ զեղակարիսաչ:  
 Հայոց թըռչուն արեղաձագ  
 Ոհ քան ըզմեզ վառ եռանդով  
 Ճըչէ սուչէ սուրբ ալէլու:  
 Երամ՝ երամ դուք արաոյաներ  
 Թըռիք թըռիք՝ թեւով սսկի,  
 Աղօթք մաղթանք հնչեցուցէք:  
 Թըռիք ի վեր, անդր աստղերու  
 Դաշանրէն վեր, եղիք թարգման  
 Մեր ճըզնաւոր ընկերութեան:

Այլոց ճգնաւորները կը լսեն, ներսէն կը լսուի երէնց ա-  
 աջնորդի մեծ վարդապետին Ոսկիի ձայնը:

ՈՍԿԻ

Պատկառելով, սոսկալով,  
 Բարձրացուցէք ընկերներ,  
 Աղօթք օրհնենք առ Աստուած:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Եղիցի:

ՈՍԿԻ

Օրհնեալ պայծառ արշալոյս,  
 Վարդակարմիր արեգակ,  
 Օրհնեալ լուսնակ արծաթիկ,  
 Իր քոյր եղբայր կոյս աստղեր:  
 Օրհնեալ զեփիւռ ու խաւար,

Մեռնչներու, հրեշտակաց  
 Օրհնեալ լեզու լըռութիւն:  
 ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Եղիցի:

ՈՍԿԻ

Օրհնեալ ալիք հոգմակոծ,  
 Երկինք ամպեր հըրացայս.  
 Օրհնեալ ահեղ պատուհաս՝  
 Սասանութիւն սրածութիւն:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Եղիցի:

Սաթենիկ շուարած ու զայրացկոտ, Սուքիասին հետ պա-  
 հուած տեղէն դուրս կ'ելլէ: Կը յայտնուի և Ոսկի:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՍԱԹԵՆԻԿ, ՍՈՒՔԻԱՍ, ՈՍԿԻ, ՃԳՆԱՒՈՐՆԵՐ: Ոսկի և  
 ճգնաւորները զարմացած կը նային Սաթենիկի:

ՍԱԹԵՆԻԿ

Յառաջ մատիւր Սուքիաս,  
 Քրիստոսի չեմ խելահաս:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Երկինք բնչ է այս նոր տեսիլ,  
 Արատաշատի տիրուհին հոս:



ՈՍԿԻ

Հընչէ Սաթենիկ, Քրիստոսի անուն,  
Փափուկ երկիւղած, հընչէ այլ անուն:

ՍԱԹԵՆԻԿ

Պատուէր տուր Սուքիաս  
Ընկերներուդ ճրգնաւոր՝  
Չ'արտասանել իմ անուն:  
Անյայտ մընայ իմ գալուստ:

ՍՈՒՔԻՍՍ

Քոյր պաշտելի Սաթենիկ,  
Մոռցիր նանիր ահ երկիւղ.  
Թէ Քրիստոսին գրօշին տակ  
Կ'ուզես մըանել, ըլլալ հարս:

ՍԱԹԵՆԻԿ

Չարեր ու քաջեր զիս ահաբեկեն,  
Քանի ուխտադրուժ փափաքիմ ըլլալ  
Աստուածոց, կըողց, աշխարհիս հայոց:  
Ի զ՛ուր իմ որդիս՝ Վըրոյր բանաստեղծ  
Հիւսեց ոգբերգու՝ տեսարան սիրուն,  
Երգելով ուզեց արխրութիւնս վանել:  
Կարծես իմ գըլխիս գեք և զիցուհիք  
Անէծքներ կարգան, խրոտվեն հոգիս:  
Պահ մը ես մոռցած կեանքիս զարհուրանք,  
Չեզ հետ քրիստոնեայք փափաքիմ վիճել:  
Թաղէի աշկերտ զու սիրուն Ոսկի,

Ինչ՞ու զուք կ'օրհնէք երկինքէն հասած  
Ամէն պատուհաս, ամէն զարհուրանք:

ՈՍԿԻ

Սաթենիկ աիկին, պատիժ ու վայելք  
Այս երկրիս վըրայ բընաւ մեզ համար  
Չունին հըրապոյր և ոչ ալ սոսկում:  
Թէ մենք անձնուրաց՝ ըլլանք համակամ  
Քրիստոսի տուած պատուհասներուն,  
Դիզենք արժանիք Աստուծոյ առջեւ,  
Անդին վայելենք բիւր վարձատրութիւն:

ՍԱԹԵՆԻԿ

Բայց ձեր նոր Աստուած քանի բարի է,  
Ինչ՞ու իր սիրած բարի հոգիներ  
Թող սայ որ ամանջին, ապրին ողորմուկ:

ՈՍԿԻ

Այս կեանքն անցաւոր է և խաբուսիկ  
Քրիստոնեայ հոգիք հոս կ'ուզեն ամանջել,  
Անոյ ապահով կ'ըլլան անթառամ՝  
Աստուծոյ պարգեւ անպատում կենաց:

ՍԱԹԵՆԻԿ

Քրիստոս կարող չէ՞ իր բարի հոգուց  
Պարգեւել վայելք երկրի և երկնից:

ՈՍԿԻ

Նազելի աիկին, տուր ինձ պատասխան.  
Արտաշատի ձեր ներքին գազանիքներ

Կըրնանք հաղորդել ամէն ըստորին  
Հըպատակներուն և դերիններուն:

ՍԱԹԵՆԻԿ

Ոչ. և ինչո՞ւ:

ՈՍԿԻ

Եւ ի՞նչ պատճառաւ տիեզերաց Պիսա  
Բանայ իր գաղանիք իր սիրած հոգւոց:  
Քրիստոսի կըրօնք մեզ կը քարոզէ,  
Հաւատով հըլու մընալ անմեղուկ,  
Չի բըննել երբէք երկինքի անձառ  
Մեր մըտքին անհաս խորին գաղանիքներ:  
Քու հարցումփորձիդ պատասխան չի կայ.  
Ինչո՞ւ կը յուզես հաւատոյ գաղանիք:

ՍԱԹԵՆԻԿ

Քրիստոսի կըրօնք՝ հոգիս Սուքիաս  
Իր գաղանիքներով կարող չէ բընաւ՝  
Կուռ հաստատուն հիմ գընել սըրտիս մէջ:  
Քանի քու պաշտած այլ Քրիստոս Սասուած  
Մըտքիս պայծառ ըոյս չի ծաթեր շնորհեր,  
Ես ի՞նչ պատճառով կուռքերս ուրանամ:  
Քանի որ խընդիր բարւոյ և չարի՝  
Քարողէ նաև նոյն իսկ քու Փրկիչ,  
Լաւ է տատանիմ ես հին կըրօնքիս մէջ:

ՍՈՒՔԻԱՍ

Խըղձա՛, քոյր չըքնաղ Սաթենիկ տիկին,  
Խըղձա՛ դու քեզի. ի՞նչպէս բողբոսես

Քրիստոսի մաքուր դաւանանք անձառ՝  
Արամազդայ փուճ, վաւաշ դենին հեռ:

ՍԱԹԵՆԻԿ

Հին նոր կըրօնքի մէջ խըտիր չեմ գըներ.  
Այն օրէն ի վեր երբ դու Սուքիաս,  
Մեղմիկ մեղմօրօր քու նոր կըրօնքիդ  
Վարդապետութիւնք ինձ ներշընչեցիր.  
Ալ աչքըս բացի, չուզեցի նիրհել  
Քըննեցի նախնի կըրօնքիս պատմութիւն,  
Քուրմեր գիտնականք՝ ինձ որոշ մեկին,  
Ուսուցին գաղանիք մեր աստուածներուն:  
Դուք կը քարողէք բարի Քրիստոսի  
Վարդապետութիւնք, բայց ես անոնց մէջ  
Չեմ տեսներ տարբեր, յայտնի նորութիւն.  
Հանդերձեալ կենաց ամէն պայմաններ  
Ես նոյն կը գըրանեմ երկու կըրօնքի մէջ:  
Մոգերն նոյնպէս դուք բարիներուն գրախոս,  
Չարերուն գըժոխք կայ կ'ըսէք անպին:

ՈՍԿԻ

Սաթենիկ տիկին գուցէ լաւ գիտնաս  
Տաճարականաց շինձու պատմութիւն.  
Սակայն համոզուէ որ Քրիստոսի կըրօնք  
Հրաշքներով անձառ ճըշմարտութիւն է:

ՍԱԹԵՆԻԿ

Թէ՛ դուք հին կըրօնքի զօրութիւն ահեղ  
Կ'ուզէք ուրանալ, ծաղրէք անխըրով,

Գաւանէք շինծու պատմութիւն քրքրմաց,  
 Նոյնը չէն ըսեր և ձեր քարոզած  
 Հրոչակած, պաշտած կրթօնքի համար:  
 Բաւ է Սուքիաս ի զո՛ւր մ'աշխատիր,  
 Նանիւր տեղ ինչո՞ւ ըլլամ կրօնափոխ:  
 Ախ թէ իմ ջրղեր ըլլային ուժեղ,  
 Երբէք ուշադիր ես չէի ըլլար  
 Բըրնկած մըտքիս ինձի ցոյց տուած  
 Կրօնական ահեղ սեւ պատկերներուն:

ՈՍԿԻ

Տիկին Սաթնիկ, աստուած ճըշմարիտ՝  
 Ըզքեզ հոս բերաւ. աչքըդ մի գոցեր,  
 Պատրաստ է Աստուած խաւարին մէջէն  
 Ազատել ըզքեզ, ազատել հոգիդ:

ԱԱԹԵՆԻԿ

Թէ եմ չարագործ, գըժոխքի արժան,  
 Բնարեմ Տարտարոս իյնալ իմ գըժոխք,  
 Քան ձեր գեհնին սատանայի ծոց:

ՍՈՒՔԻԱՍ

Տարփելի քոյր իմ, հոգիս Սաթնիկ,  
 Ահա մօտեցար լոյսի սուրբ ալին:  
 Ինչո՞ւ կոյր ըլլաս ու բեզ չի գըթաս:  
 Ահա աւազան, սուրբ մըկըրտարան,  
 Ե՛կ բեզ մըկըրտանք, այն ատեն տեսնես  
 Տեսիլ հրաշալի Քրիստոսի պատկեր:

Այն ատեն տեսնես որ մեր քարոզած  
 Վարդապետութիւնք են ճըշմարտութիւնք:

ՈՍԿԻ

Գիացիր Սաթնիկ, աիկին Տիրուհի,  
 Որ ես, ընկերներս, կոյր, արխմար մըտքով  
 Քրիստոսի խաչին չեղանք խընկարկու:  
 Գիացիր Սաթնիկ աիկին նազելի,  
 Որ չեմ սոսկական մարդ մը աննըշան.  
 Ես և ընկերներս ազնուական ենք,  
 Հոսմայ արքունի պաշտականներ,  
 Խըրոխտ կայսերաց երկրէն գեոպաններ,  
 Հայաստան հասանք. Սանասարուկ արքայն  
 Մենք գեո չի տեսած, գլտանք ձեր երկրին  
 Լուստուութե՛ք Քրիստոսի աշկերա.  
 Լըսեցինք անոր սիրուն քարոզներ,  
 Մենք տեսանք անոր ահեղ հրաշալիք.  
 Լըսէ Սաթնիկ՝ թաղէի հըրաշք.  
 Մենք անով դարձանք Քրիստոսի զինուոր:  
 Երբ խօսէր թաղէ, քարոզէր մեզի  
 Քրիստոսի կրթօնք և սուրբ հըրաշքներ,  
 Հեոուն մենք տեսաք զոյգ մը եզնիկներ.  
 Հեզնիկով ըսինք, սուրբ թաղէսին.  
 « Թէ կ'ուզես հաւտանք քու քարոզներուդ,  
 Պատուէր շուսով տուր այն եզնիկներուն  
 Որ կինան ու մենք ըրնենք ու մօրթենք »:  
 Սուրբն թաղէոս, պատուիրեց անոնց.

Կեցան եղնիկներն, մին մենք մորթեցինք,  
 Ոսկրներն զատ անդ զբրինք պահեցինք.  
 Կերանք եղնիկի՝ քաղցած կերանք միան,  
 Ու ապա թապէ եղնիկի ոսկերք  
 Ամփոփեց ժողկեց, փրոնց մորթը վրան.  
 Յետոյ գետնամած աղօթեց երկար.  
 Յանուն Քրիստոսի յարութիւն տուաւ  
 Մեռած եղնիկի այն ոսկրներուն:  
 Վազեց կենդանին, իր ճամբան առաւ.  
 Սակայն կաղ ի կաղ նա կ'երթար առաջ.  
 Մեր զինուորներէն մին փորձել ուղեց  
 Թապէի այն ուժ հրաշագործութեան.  
 Եղնիկի սուքի մէկ ոսկրն էր պահած.  
 Իմացաւ թապէ, գտաւ այլ գաղանիք:  
 Այն ատեն ամէնքս աւգանք թապէի՝  
 Անպատում հըզօր հաւատքի անխախտ  
 Ճըմարաութիւն վեհ անասանելի:  
 Թողինք սուր նիզակ, գացինք իրեն հետ,  
 Աշակերտ եղանք մեծ վարդապետին:  
 Թապէի խօսքեր, ըզմեղ փոխեցին  
 Եղանք Քրիստոսի զինուորներ հըլու:  
 Ման եկանք համայն, աշխարհ Հայաստան:  
 Լոյս սրփոնց թապէ. Սանատրուկ արքայն  
 Թապէի լոյսին աշուրներ գոցեց.  
 Հալածանք ահեղ հանեց ու ջարդեց  
 Քրիստոսի անմեղ նոր հետեւողներ:  
 Ընկաւ թապէոս նահատակ եղաւ

Քրիստոսի սիրուն, իր սուրբ արիւնով  
 Ոռոգեց երկիր Հայաստան աշխարհ,  
 Ծըլան ծագկեցան սուրբեր նորատունկ,  
 Կոյսեր ու հարսեր եղան զբոշակիր  
 Մեր նոր Աստուծոյն. քաջարի խիզախ  
 Վառ վառ հաւատքով կրակի ու սուրի  
 Անձնատուր եղան, խըլեցին գափնի  
 Կահատակութեան շողշողուն պրտակ:  
 Սաթենիկ տիկին թէ պատմեմ քեզի  
 Մեր դարձին ամէն պատճառներ զօրեղ,  
 Հարկ է շատ օրեր յաճախես հոս տեղ:

## ՍԱԹԵՆԻԿ

Սուքիստ արի, ձեռքըդ տուր ինձի . . .  
 Կարծես ոգիներ դարձեալ մօտենան,  
 Կարծես Մասիսի սարերու վըհեր,  
 Գարձեալ զարհուրանք գոտան ականջիս:  
 Ոսկիի պատմած այս ամէն հըրաշք  
 Թէ չեն առասպելք, ի՞նչպէս կարող եմ  
 Ուխտապրուժ չըլլալ իմ հին հաւատքին:

## ՍՈՒՔԻՍՍ

Ամփոփէ ըզբեղ քոյր իմ Սաթենիկ,  
 Ինչո՞ւ առասպել յանդգնիս կարծել,  
 Ինչ որ անհընար մըլաքիդ կ'երևի:  
 ՈՍԿԻ  
 Սաթենիկ հոռվմէական զինու զօրու մենք ծընունդք,  
 Ըզբեղ ինչո՞ւ ուղենք խաբել, ունինք ի՞նչ շահ նրպաւ  
 (տակ:

Գիտցիր աիկին, քաջ գիտցիր, ներկայ աիումը  
 (Քրիստոսի  
 Ունի միակ նըպատակ, թափել արիւն, խըլիլ պըսակ  
 Անթառամ: Ուրացանք մենք փառք ու սրատիւ  
 (արքունի:  
 Մերժեցինք կոյսեր, հարսեր, վաւաշք վայելք Հը-  
 (տովմայ,  
 Խրախճանք հրապոյր խիզախ Հոովմայ կայսերա-  
 (կան պալատան  
 Խեղահաս խելօք մաքով ուրացանք մենք կամովին:  
 Գիտցիր աիկին արգ գիտցիր, թէ նըպատակ խեղճ  
 (նանիր  
 Չունինք բնաւ հաւատացիր. բեզ քարողենք Քրիս-  
 (տոսի  
 Կենաց վարուց անպատում անհերքելի հըրաշքներ:  
 Առասպելք չեն, ինչ որ քեզի կը քարողենք կը  
 (պատմենք:  
 Այս աշուրներ Հըտովմ ներկեց նահատակաց ա-  
 (րիւնով.  
 Սոսկավիթխար կայսերական արխընըուշտ հան-  
 (դէսներ,  
 Մեզի որոշ ներշնչեցին քրիստոնէից գերապանձ  
 Հաւատք հըզօր, անասան, հաւատք մաքուր, ա-  
 (նարատ.  
 Հոովմէական կրկէսներ արխընըուայ ներկուեցան  
 Նոր հաւատքի զրօշակիր նահատակաց արխընով.  
 Ողջ ողջ մարմին քրիստոնէից գազաններու բեր-  
 (նին մէջ

Տեսանք այս մեր աշերով, անոնց բերնէն լըսեցինք  
 Ոչ անէճք այլ ալէլու, օրհնեցողութիւնք, փափուկ  
 (մըրմունջ,  
 Խընկանուէր աղօթք աղերս առ գերագոյնըն խա-  
 (չեցեալ:  
 Տեսանք մարմին քրիստոնէից ողջ ողջակէզ օր-  
 (հասականք.  
 Բոցերու մէջ անխընով կ'երգէին երգ առ Քրիստոս:  
 Ըսէ Տիկին Սաթենիկ, ինչո՞ւ վաւաշ Հոովմայեցին  
 Մարմնասէր, ինչո՞ւ խիզախ կայսերական այն  
 (ժընուեցք  
 Մերժեցին մարմնոյ ամէն հանգիստ վայելք ան-  
 (տահման,  
 Չերկ անարկ գերիներու, իրենց կամքով կըրեցին  
 Նախատինք, լըլիանք ահեղ, տանջանք սոսկում  
 (ահաւոր:  
 Թէ գիտես պատմէ աիկին ո՞ր այն մոլին հեթանոս  
 Իր հաւատքին, իր աստուածին սիրուն համար կա-  
 (մովին  
 Արիւն թափեց: Պատասխան տուր չըքնաղ աի-  
 (կին Սաթենիկ:  
 ՍԱԹԵՆԻԿ  
 Ոսկի եղբայր, այդ քո հըզօր խօսքերով,  
 Կապես լեզուս, մագես հողիս շարատանջ:  
 ՈՍԿԻ  
 Տիկին նազելի, Սաթենիկ աիկին,  
 Թէ ես համոզուած իմ քարողներուս,

Ալ մի արնտրնար, արդ ժամն է հասած,  
 Քեզ համար Քրիստոս հիւսած է պըսակ.  
 Ասաղերով շար շար, շարուած այն պըսակ  
 Լուսնակ այտերուդ պիտ' տայ կայծ շըպար.  
 Չիւնի պէս անբիծ հողիդ ճերմրկնայ,  
 Բզգաս անպատում հողեկան հանդիսա.  
 Ա՛լ քաջեր չարեր փախչին կորակոր:  
 Արի ընդունէ ճըշմարիտ կրօնքի  
 Մաքուր երկնային վաւանանք սիրուն:  
 Այս է իմ վերջին աղերս ու մաղթանք:  
 Ահա կը լսեմ հեռուէն ձայներ,  
 Գիշերուան տեսիլս անշուշտ կատարի.  
 Էս և ընկերներս ի սէր Քրիստոսի  
 Կ'իյնանք ահաւոր սուրերու բերան:  
 Կը լսեմ շըշուկ շըներու ձայներ,  
 Շուտով կը հասնին նահատակողներ:  
 Տիկին Սաթենիկ յիշէ բզՔրիստոս:

Անտառին մէջէն կը լսուի նետերու սուրոցք, որսորդներու  
 փողերու հնչում, աղաղակ, թռչուններու շուարական փա-  
 խուտ, վերաւորեալ երէններու լալկան ճուղներ, հեծկտանք,  
 որսորդներու պռտալներ: Որսորդ շներ կը մտնեն թատերաբեմ,  
 նախ կը հաչեն, յետոյ Սաթենիկը տեսնելով, անոր առջեւ  
 կը փռուին կը լզեն ձեռունները:

### ՍԱԹԵՆԻԿ

Փախչիլ այս տեղէն, չեմ ուզեր փախչիլ,  
 Սէր իմ Սուբիաս, տար զիս Ոսկիին  
 Այս մութ ճըզնարան, հոն ինձ հետ խօսէ

Պատմէ Քրիստոսի ամէն հըրաշքներ:  
 Ոսկին ա՛լ խախտեց իմ հին կըրօնքիս  
 Անասան հիմունք, տանջանք ահաւոր  
 Ինձ համար կ'ըլլայ հեթանոս մեռնիլ:

Սուբիաս կը հնազանդի, միասին ճգնարան՝ քարայրին մէջ  
 կը մտնեն:

### ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ՈՍԿԻՍՏՔ, ԱՐՏԱՒԱԶԳ, ՎՐՈՅՐ, ՈՐՍՈՐԳՆԵՐ, ԿԱ-  
 ՊԱՐՃԱԿԻՐՆԵՐ: Զիեբէն վար կ'իջնեն՝ Արտաւազդ կը մօտե-  
 նայ Ոսկիին:

### ՈՍԿԻ

Յառաջ Արտաւազդ թէ ունիս պատուէր  
 Մատիբ մօտեցիր, խօսէ համարձակ:

### ԱՐՏԱՒԱԶԳ

Դ՞ուք էք նենգաւորք, որ մեր քաջարի  
 Ալանաց ծընունդ խրոխտըն Սուբիաս  
 Մոգեցիք ձեր սուտ, վատ քարոզներով:

### ՈՍԿԻ

Մենք ենք վարդապետ քաջ զօրավարին,  
 Բայց սչ խաբեբայ չար քարոզիչներ:

### ԱՐՏԱՒԱԶԳ

Լըսած ես անշուշտ թէ ինչ կատաղի  
 Ունիմ ես բընոյթ, և ինչպէս անդուծ  
 Վայրագ հարուածով տապալեմ ինձ դէմ

Կրօուող, զիմադրող անխրտիր զամենք:  
 Չարժեր քեզի հետ հէք խոտածարակ  
 Շատ երկար վիճել: Ընկերներդ և դու  
 Ուրացէք Քրիստոս, Սուքիասայ հետ  
 Դարձէք զարձեալ գերի կրող հայրենի:  
 Այս է իմ պատուէր, եթէ անասան  
 Յամաութք մընաք ձեր խեղճ կամբին մէջ,  
 Ողջ ողջ չարչարենք ըզձեզ կը խաչենք:

ՈՍԿԻ

Արի ինձ մատիր Արտաւազդ սրդի,  
 Խրոխտ արքայազուն արի մօտեցիր,  
 Համբոյր տամ բերնիդ որ զիս և ախումբս  
 Արժանի դատեց լինիլ խաչակից  
 Քրիստոսի անարդ բայց սուրբ տանջանաց:

ԱՐՏԱԻԱԶԳԻ

Երազմս Ոսկի  
 Խընայէ քեզի:  
 Թէ զիս կը ծաղրես,  
 Գիտցիր կ'արծարծես  
 Կառդած բընութիւնս:  
 Ալ չեմ աղաչեր,  
 Այլ կը հրամայեմ,  
 Ուրացիք Քրիստոս:

ՈՍԿԻ

Գիշերուանս տեսիլ ահա կատարի,  
 Ընկերք փարելի՛ ժամն է արդ հասած,

Վերջապէս երկինք մեզի կ'ողորմի,  
 Բանայ գըթութեան լիառատ աղբիւր,  
 Ահա մեզ յըզէ այս քաջ որսորդներ,  
 Որոնց սուր նիզակ ըզմեզ արժանի  
 Պիտ' ընեն տենչիկ նահատակութեան.  
 Տենչայինք սիրով ըզձացեալ օրին,  
 Հասած է արդ ժամ. քաջացիք եղբարք:  
 Քրիստոսի հաւատք վառեցէք վառ վառ.  
 Չըլլայ որ մէկը ուրանայ Քրիստոս.  
 Ամուր ու յամառ հաւատքով անխախտ  
 Նահատակութեան գրկինք սիրուն բախտ:

ԱՐՏԱԻԱԶԳԻ

Ոսկի զառանցեմս,  
 Թէ զուս յիմար ես:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Թէ զու ես սրդի քաջ մեր արքային  
 Եւ այնպէս խիզախ ծաղրես այպանես  
 Մեր այս ճըզնասուն ախումբին գըլուխ,  
 Գիտցիր պաշտելին մերըս վարդապետ  
 Քան քեզ սուսել ունի արժանիք.  
 Քահանայ է այն. օծեալ Աստուծոյ  
 Այլ ինչ կոշա լեզուով վարուիս իրեն հետ:  
 Թէ բո նըպատակ է մեզ խողխողել,  
 Քաշէ սուր նիզակ, ծըծէ մեր արիւն  
 Բայց մի նախատեր Քրիստոսի ծառան:

## ԱՐՏԱԻԱԶԳ

Վերջին խմ վրձիս կարգամ կը գոռամ,  
 Զունիսմ փուճ ժամեր ձեզ հետ վիճելու,  
 Ես ձեզ փնտոէի վերջապէս զըտայ.  
 Պատրաստ եմ շուտով գըլուինիկ կըտըել,  
 Թէ չէք ուրանար Մեսիայն խաչուած:

## ՈՍԿԻ

Հաստատուն գիտցիր կ'ուզենք մենք խաչուել,  
 Մեսիայն խաչուած մեզի կ'սպասէ.  
 Սիրով նահատակ փափագինք ըլլալ:

## ՃԳՆԱԻՈՐՆԵՐ

Ահա մեր վիզը մերի ձեր սուրին տակ  
 Կը զընենք սիրով, անխ մի խընայէք  
 Թափեցէք արիւն մեր հիւծած մարմնոյն:

## ՎՐՈՅՐ

Արտաւազդ եղբայր  
 Զիս կ'ապշեցընէ  
 Այս նանրահաւատ  
 Ակուսը ճըզնասուն:  
 Այս ի՞նչ կըրօնք է  
 Որ մըղէ զիրենք,  
 Աներկիւղ անխախ  
 Իյնալ նահատակ:  
 Գուցէ ճիւղաներ  
 Մոզեր են զասոնք:

## ԱՐՏԱԻԱԶԳ

Սիրուն վըրոյր, եղբայր ինչեր  
 Կը մըտածես, կը գուշակես:  
 Ոչ ճիւղաներ, ոչ մտուլթիւն  
 Այլ խելագար արխամբուլթիւն  
 Ասոնց միտքը պաշարած է:  
 Բայց ես անգութ ու անխընայ  
 Պիտի ջընջեմ ասոնց արմատ:  
 Բաւ է երկրիս Արարատեան,  
 Բաւ է աստուածն Արամազդ վեհ,  
 Այն խաչեցեալ Աստուած Քրիստոս  
 Պիտ' շունենայ երկըրպագու.  
 Թող աշխարհ մեր յաւէտ պահէ  
 Իր հեթանոս կրօնք վաղեմի:

## ՈՍԿԻ

Երազ անոյշ երագէ . . .  
 Քրիստոսի կրօնք Արտաւազդ  
 Ի Հայաստան մեծ ծաւալ  
 Պիտի զըանէ շուտափոյթ.  
 Նահատակաց սուրբ արիւն,  
 Թագէտսի նորատունի  
 Արմատները կ'ոտոզեն.  
 Քրիստոսի ծառ պիտ' բանայ  
 Զըբնազ ծաղիկ հաւատքի,  
 Պիտի տեսնէ Հայաստան  
 Որ միայն սուրբ գաւառանք:



Քրիստոսինն է քարոզած :

Արամազդայ կըռատունք

Պիտի փըշըին քարուքանդ :

ՃԳՆԱԽՈՐՆԵՐ

Շարժէ ամպերն ու Ստուած,

Շողա փայլակ շանթաձիգ.

Գոռա երկինք որ սարսի

Անասա որդին Մաթինկան.

Շանթեր սըրսիէ ու Ստուած

Անհաւատից տաղէ սիրա,

Փըշըէ Մասիս Արագած,

Գետոց ջըրեր եռացուր.

Գոռան վըհեր վըժոխոց,

Պոռթկան կըրակ, ծուխ խեղդող,

Որ իմանան ամբարիշաք

Թէ ես Ստուած ճըշմարիտ :

ՎՐՈՅՐ

Տես Արաւազդ այս ինչ անէ՞ծք

Կարդան համայն Հայոց գըլիին :

ՈՍԿԻ

Գիտէ Աստուած վըրէժխընդի

Ըլլալ արդար իր վեհ փառաց :

Գիտէ Աստուած ահեղասաստ

Իր սոռիններ ջաղխել ջարդել,

Պահել պատիւ իր վեհ ուժին :

Բաց են մեր կուրծք ձեր նեանրուն.

Հարէք ըզմեզ, տապալեցէք,

Արդար երկինք անմեղ արեան

Ձի ուշանար խընդրել իր վըրէժ :

ԱՐՏԱԽԱԶԳ

Կարի երկար երկարեցաւ,

Համբերութիւնս : Վըրոյր անսա,

Վառ հանճարովդ արի կազմէ

Տեսակ տեսակ տանջանք պատիժ :

Ու որ կուրցեր, մեր աստուածներ

Կը նախատէ, մենք անխընայ

Չանոնք պէտք ենք տանջել ջարդել :

ՎՐՈՅՐ

Կապարճակիրք ե զուք որսորդք քաջազնդ,

Հաստ ե ուժեղ եղեւիններ կըրարեցէք,

Հոս ցըցեցէք, հաստատեցէք շար ի շար :

Անտաններէն օտին բերէք զիւրաւառ

Չոր ձիւղ տերեւ ցըցիրուն շուջ պատեցէք :

Խոշոր քարեր հաւաքեցէք զիւրազէլ.

Կինձեր կապած անտաններէն բընեցէք,

Բերէք շուտով օձեր իժեր թունաւոր :

Կազմենք հանդէս աստուածներու ի պատիւ

Նոր կըրօնքի ջնջենք արմատ անիծած :

Պատրաստութիւն կը տեսնուի, կապարճակիրները կը հնազանդին, ամանք կը սրեն իրենց սուրբը, կը պատրաստեն աղեղին :

## ԱՐՏԱԻԱԶԴ

Խայտասցէք ուրեմն, ահա ցանկալի  
Հասաւ ժամանակն. այժմ՝ ձեր փափագ  
Կատարի կ'ըլլաք Քրիստոսի վրկայ:

## ՈՍԿԻ

Ինչո՞ւ Արտաւազդ մանկաբար ծաղրես,  
Ծիծաղե՞նք վրտաբ թէ՛ զառն արտատուենք:  
Գիտցի՛ր Արտաւազդ ձեր լարած տանջանք  
Երբէք զարհուրանք չեն կարող ազգել.  
Մենք ուրախ զուարթ Քրիստոսի սիրուն  
Արին կը թափենք, փրկիկենք մեր հոգին:  
Աստուած մեր Քրիստոս: Թող զըթայ ձեզի,  
Համայն հայութեան փրկէ հոգիներ:

## ԱՐՏԱԻԱԶԴ

Լըռէ՛ ճրգնաւոր, չորնայ քո բերան.  
Հայոց ազգութիւն չուզեր նոր Աստուած:  
Դուք ազատ կամքով արեւն կը թափէք  
Քրիստոսի համար, մենք զինի խըմենք  
Ի կենդանութիւն գոռ Արամազդին:

## ՈՍԿԻ

Չի տեսեր երկար Բաքոսի հանդէս.  
Համայն Արարատ բզգաստանալով,  
Մոռնայ մարմնական հեշտանք ու վայելք,  
Կ'ըմբռնէ կենաց վեհ պարկեշտութիւն:  
Թէ՛ երկինք զըթայ հօրդ Արտաշէսի  
Պարգեւէ արեւ երկար տարիներ,

Արտաշատ ստտան վաղ կամ անագան  
Ընդ փոյթ կը պարզէ Քրիստոսի զըրօշ:  
Արագած Մասիս կըրեն սոկեշող  
Նըշան յաղթական խաչին Քրիստոսի:

## ԱՐՏԱԻԱԶԴ

Երազ թէ՛ ըստոյդ ըլլան այդ խօսքեր,  
Սակայն հաւատա՛ թէ՛ հայրս ընդունի  
Քրիստոսի հաւատք, զիտցի՛ր դու Ոսկի,  
Ես չեմ խընայեր, կ'ըլլամ հայրասպան  
Եւ մեծ վրտանդէ՛ փրկեմ հայաստան:  
Թէ՛ մեր սուրբ սարեր ըլլան խաչակիր,  
Հայոց վազեմի քաջեր վիշապներ  
Ամբողջ Հայաստան ջըբով ողողեն.  
Խեղզեն ժայռերուն ուխտադրուժ զըլուխ:  
Կործանի ամբողջ համայն Հայաստան,  
Սակայն հին կըրօնք մընայ անսասան:

## ՈՍԿԻ

Արե՛ք ընկերներ, բարձրանայ մեր միտք  
Առ բարձրաբն Աստուած խընկենք մեր աղօթք,  
Արտաւազդին հետ չարժէ ալ վիճել:  
Ահա պատրաստին պէս պէս տանջանքներ.  
Արծարծենք մեր մէջ Քրիստոսի սուրբ հօւր:

Ճգնաւորները բոլորակ մը ձեւացուցած, Իրենց մէջ կ'առնեն  
Իրենց վարդապետը Ոսկին: Մերազիր, կէս մարմնով կը խո-  
նարէին, համբուրելով գետինը՝ կ'աղօթեն:

ՃԳՆԱԽՈՐՆԵՐ  
 Գոռ կամակոր, անասան,  
 Հաւասք վառ վառ բորբոքած,  
 Մըղէ ըզմեղ չարատանջ  
 Զարչարանաց Գողգոթան :  
 Հրդեհ սիրուն Գրիստոսի  
 Լափէ ջնջէ վառ երկխղ,  
 Արի խիզախ նահատակ  
 Կ'ուզենք ըլլալ քաջարար :  
 Քըշէ առաջ Պըղուտն  
 Քո երիվարք խըստերան,  
 Թող ջախջախն մեր գանկեր,  
 Տարտարոսիզ հրէշ բերան  
 Պիտի սոսկայ մեր մարմնէն :  
 Հայոց Առէզ ճիւղաներ,  
 Թող չի լըզն մեր դիակ .  
 Քեզի համար Արաւազդ  
 Յարութիւն ալ չենք առներ :  
 Երբ նահատակ մենք իյնանք,  
 Թըռչի հողին մեր ի վեր :  
 Զարդէ լափէ մեր մարմին  
 Որքան կ'ուզեն Արաւազդ .  
 Մենք դէպ ի վեր առ Աստուած  
 Կ'ուզեւորինք խայտալով .  
 Մեր ոտքին տակ տարածէ  
 Կայծակ սուրբը հըրաշէլ,  
 Ոստոստելով յալթական

Պիտի անցնինք այդ ճամբէն :  
 Թող մեր չորս կողմ պաշարեն  
 Տարտարոսի վիշապներ,  
 Թող մեր գըլխին հուր փըսխեն  
 Մասեաց քաջեր ճիւղաներ .  
 Մենք անասան հաւատքով  
 Զարհուրանքի Գողգոթան  
 Պիտի ելլենք հիացած :  
 Դուք գունդագունդ զուարթունք  
 Պարք հրեշտակաց հոգեհազ,  
 Նազուհ բնարով հոգեշունչ  
 Արծարծեցէք մեր հողին,  
 Տուէք խրախոյս ձեր փողով  
 Երբ մենք խաչուած հառաչենք :

## ԱՐՏԱԽԱՅԳ

Երազեցէք քաղցրանոյշ,  
 Բաջազեցէք խելագար .  
 Վաշ ձեր մըտքին հազար վաշ,  
 Գահալիփիք ի գըժոխք  
 Եւ կ'երազէք յաղթութիւն :  
 Օրոր անոյշ թող կարդան  
 Հըրէշք վիշապը և քաջեր .  
 Երանի ձեզ թող կարդան :  
 Այո թըռչիք Գողգոթայ,  
 Մեր սուր նիզակ ձեզ թեւ տան  
 Ի տարտարոս կը թըռչիք  
 Որփէսի երգ լըտէք :

## ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Ընկերք ուխտենք միաբան,  
 Աննել տանջանք սանակսիս.  
 Ահա լարէ Արատազդ  
 Գազանային պատուհաս.  
 Ուխտենք ցրմիշա կամակոր  
 Արհամարհել ահ ու զող.  
 Փող երկնագոյշ հրեշտակաց  
 Վառէ մեր սիրտ բոցաշունչ,  
 Ուխտենք չըլլալ ուխտագրուծ,  
 Ուխտենք ըլլալ մարտիրոս:

## ՎՐՈՅՐ

Հասնիք շուտով քրիստոնեայք  
 Ձեր փափաքին շուտ հասնիք.  
 Ժըպիտ ծիծաղ մեր այտին.  
 Դիտենք երկնից ձեր Աստուած:

## ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Դեռ կը լըռե՞ս ով Աստուած  
 Այս ամբարիշտ բերաններ  
 Չի խրրատե՞ս շանթահար:

## ՈՍԿԻ

Սիրուն ընկերք կարկեցէ՛ք,  
 Երկինքի չինք գատաւոր.  
 Գրիստոնէից վայել է  
 Սիրով ներել թըշնամեաց:

## ԱՐՏԱՒԱԶԴ

Աւազ քեզի ծեր խորամանկ.  
 Շատ ուշ գիտցար ներողամիտ  
 Ըզքեզ ցոյց տալ հաւածողաց:  
 Կեղծ ու պատիր անոյշ լեզուով  
 Արդ մի յուսար թէ կ'աղատիս  
 Այս պատրաստուած տանջանքներէն.  
 Ուշ է շատ ուշ ծերուկ Ոսկի  
 Այդ քո լարած կեղծ բարութիւնդ:

## ՈՍԿԻ

Դու Արատազդ, այդ թանձրամած  
 Աստուածներու մոլի մուրար  
 Գաւանանքով՝ մի սըխալիր  
 Բընաւ երբէք մեր նոր կրօնքի  
 Վե՛հ սըրբենի, անհաս, անճառ  
 Քարողներուն շես խելահաս.  
 Մեր թըշնամին չար սատանն է  
 Անոր անէծք սիրով կարգանք.  
 Անոր գործիք երբ զուք կ'ըլլաք,  
 Խըղճանք ձեր վրայ ու կը գըթանք:  
 Մեր սըրբական պարտքն է սիրուն  
 Սիրել, չատել մեզ չարչարողք:  
 Ո՛հ մի կարծէք թէ այս խօսքով  
 Կ'ուզենք շընթել, քեզ շողմեղ:  
 Ազատ, անգութ արքայորդի  
 Լարէ մեզի բիւր տանջանքներ,

Արի հըզօր ու կամակոր

Կուզենք տանջիլ նահատակուիլ:

ՎՐՈՅՐ

Չըսի՞ բեզլի Արտաւազդ,

Թէ չար սգիք զիւթեր են

Քրիստոնէից արկար սիրա.

Տես դեռ նոյն իսկ այս ժամուս,

Մինչ պատրաստին տանջանք բիւր,

Տեսնեն կըրակ սուր նիզակ,

Անփոյթ մընան խելագար:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Խելահաս, հանդարտամիտ՝ առ բեզ Աստուս՝

(ճըջմարիտ,

Կոխան սաից՝ կ'անոնեք կըրակ, հասնինք առ բեզ

(ո՛ղ բարձրեալ.

Քեզի համար խաչեցեալ, թող մեզ գոչեն խելագար:

ՈՍԿԻ

Արարչապետ, ամենակալ, Աստուած ահեզ փողէ

(բարբառ,

Անպատում իր փառաց, հաղորդակից առնել կամի:

Սըրբենի մաքրափայլ սըրտով անբիժ անարատ,

Պարտինք թըռչիլ մօտենալ՝ ճաճանչազեղ օթեան:

Յիշեցէք ընկերներ անցեալ կենաց մեզք բարդ ի

(բարդ.

Անզեղջ, անապաշխար կարելի չէ ընդունիլ

Նահատակաց արժանի, հրանութեան սուրբ պըտակ:

ՃԳՆԱՒՈՐՆԵՐ

Ոտիցդ առջեւ սուրբ վարդապետ,

Բանանք մեր սիրա լանք զառնազին

Անցեալ կենաց մեր յանցանքներ:

Մեղանք ընդդէմ աստուածային

Սուրբ օրինաց. կոյր աչացու

Անցեալ կենաց մեր սճիրներ

Ասենք ողբանք, լանք զառնապէս:

Արցունք զըղջման շիթ շիթ կաթի

Ի սիրա թափի այս ապիկար:

Լանք ու ողբանք. զըղջման վայրկեան

Ահա հասաւ. յիշէ Աստուած

Մեր յանցանքներ. մեր արտասուք

Ու մեր արիւն մեզի կազմեն

Մըկըրտարան, վըտակ վըտակ

Թափենք արիւն, արցունք թափենք

Հեղեղօրէն. հալի սըրբի

Անցեալ կենաց մեր մեղք զազիր:

ԱՐՏԱԻԱԶԳ

Վըրոյր հապա շինէ կրկէս,

Նեռէ զասոնք զազաններու

Ահեղ բերան. վառէ կըրակ,

Թէ կախարդ են, թող ազատին

Այս մեր լարած տանջանքներէն:

Գրեթէ պատրաստ կըլլայ տանջանքները, ցըցեր կը տնկեն, կը շինեն առժամանակեայ կրկէս մը. պարկերու մէջ կուտակուած

օձերը, բերանին կազած գազանները հոն կը դիզեն. ամէն բան սպտորաստ կ'ըլլայ:

Կազարձակիւրները կրկէսէն դուրս կը շարունակեն, արքայորդիք կը հեռանան բարձրագիւր անշ մը կը նստին, կը դիտեն կրկէսը: Վրոյր կը հրամայէ:

## ՎՐՈՅՐ

Ուժ անէք Քրիստոնեայք,  
Ահա կազմ ու սպտորաստ,  
Ըստպսոնն ձեր մարմնոյն  
Գազաններ և օձեր:  
Թէ քաջ էք մտկեցէք,  
Որ ասողջ ազատիք  
Սոսկալի կրկէսէն:  
Դէպ ի հոն սրահակներ,  
Մըղեցէք այդ մարդիկ.  
Արձակուին գազաններ,  
Տրուին կրակի ցըցերուն:

Քարայրէն կը լսուի խուլ ձայն, լալիան, նազելի: Սուքիաս է որ խօսելով կը յայտնուի քարայրի բերանը:

## ՏԵՍԱՐԱՆ ՇԻՆԳԵՐՈՐԴ

## ՍՈՒՔԻԱՍ

Ոսկի վարդապետ,  
Հասար աննշալի,  
Յանկալի ժամուն:  
Առ Բարձեալն Աստուած  
Ուղղէ քո աղերս.  
Որ ես ալ ձեզի  
Արժանի ընկեր  
Ըլլամ և թափամ  
Արիւն քաջաբար:  
Յիշէ վարդապետ,  
Խընդրէ Քրիստոսէն,  
Պահել ինձ պըտակ  
Մարտիրոսութեան:  
Ակումք սըրբենի  
Երնէկ ձեզ հազար,  
Ահա հրեշտակներ  
Պըտակ աստղահիւս  
Բերեն ձեր գլխին:

## ԱՐՏԱՒԱԶԴ

Չուտտական ալանածին,  
Կը յանդըգնիս համարձակ  
Ըլլալ զինուոր Քրիստոսի.  
Ինչո՞ւ այսքան ուշացար՝

Զերդ նապաստակ երկընչոս,  
 Պահուըանցար ծածկեցար:  
 Հա թէ կամիս, փափաքիս  
 Ըլլալ զինուոր Քրիստոսի,  
 Ազնիւ սիրով այս սըրով  
 Յըշացընենք քո, արին:  
 Վըրոյր ե այս ուխտապրութ  
 Պէտք է պատժել անխընայ.  
 Սա մեր պաշտա արքունի  
 Քարոզներով վրդովեց.  
 Խըլեց մեր մօր տարփելի  
 Երանութիւն ե հըրճուանք:

## ՎՐՈՅՐ

Յիշէ Սուքիաս այնքան երախտիք  
 Արտաշէսի հօրս, ալանաց երկրի  
 Այնքան շրտայլած բարիք գըթութիւն:  
 Մոտցիր ըզՔրիստոս, բայց ոչ զԱրտաշէս:

## ՍՈՒՔԻՍՍ

Ինչե՛ր քարոզէք հարազատ արեանս  
 Ծընունդք անճոռնիք, բարի ծընողաց  
 Անարժան գաւակք, հայրենի թագի  
 Վաս ու ապիկար ժառանգք պըժգալիք:  
 Երախտիք երբէք հասկընալ չուզեմ,  
 Պաշտեմ մի միայն ինչ որ օգտակար  
 Տեսնեմ ու գատեմ մըտքիս ե անձիս:

## ԱՐՏԱՒԱԶԳԻ

Քաշեցէք առաջ՝ Ոսկին, ընկերներ,  
 Նաեւ Սուքիաս մնլին մաշեոանդ,  
 Քանի կ'ուրանայ հայոց երախտիք,  
 Կ'արժէ ե անոր գըլուխ թըրցընել:  
 Լարեցէք աղեղ, քաշեցէք սուրեր.  
 Պատրաստ թող ըլլան ցըցեր, դագաններ:  
 Եղջիւրս երբ գոռայ, այս վատ ուրացողք  
 Նետուին ի կրկէս, անխընայ անգութ  
 Զարդեցէք զարկէք: Վըրոյր սիրելի,  
 Ահա տեսարան կը բացուի մըտքիդ.  
 Հըրճուէ ու գըրէ ասոնց ողբերգու  
 Տեսարան ահեղ աստուածոց հաճոյ:  
 Օն ահա հընչեմ, փողեմ հըրաման.  
 Պահակք ուշադիր եղիք զագանաց,  
 Կրկէսէն ասդին չի թըռչին անոնք.  
 Արիք Քրիստոսի խիղախ մարտիկներ,  
 Թէ քաջ էք հըզօր, արդ հոգի առէք.  
 Խաչով թէ կըրնաք վանել հալածել  
 Գագաններու խումբ, հապա ձեզ տեսնեմ:  
 Չայն տամ ձեզ պահակ՝ արթուն հսկեցէք:

## ՍՈՒՔԻՍՍ

Հըրճուէ խելագար վատ արքայորդի,  
 Տես ինչպէս յօժար կը նետուիմ կրկէս:  
 Գամ ես ե ձեզ հետ Քրիստոսեայ եղբարք,  
 Հայցեցէք յերկնից ուժ արիական

Կըրել ձեզի հետ, իյնալ նահատակ:  
 Մըղէ զիս հոգի գազանաց բերան  
 Իյնալ բըզըքտիլ ըլլալ մարտիրոս:  
 Թափելով արիւն, սըրբել իմ բըծեր:  
 Հապա ընկերներ ահա հրաւիրէ,  
 Տայ պատուէր Քրիստոս իր սիրոյն համար  
 Թափելով արիւն սըրբել մեր բըծեր:  
 Պաշտելի Աստուած, Քրիստոս փարելի,  
 Թէ մենք արժանի ըլլանք քառութեան,  
 Մի մոռնար յիշէ Արաաշատի հարս,  
 Սաթենիկ աիկին գըրէ երկնից հարս:

## ԱՐՏԱՒԱԶԳԻ

Սնիծուած բերան, անարգ Սուքիաս,  
 Կամիս և որսալ և մեր սիրուն մայր:  
 Դըժոխքի կըրակ կը վառես իմ մէջ,  
 Ահա տամ հրաման, ընկիր գիտապասա,  
 Իմացիր ինչպէս թէ քաջ ևս որսալ  
 Հայոց աիրուհին, տենչալին իմ մայր:  
 Պատրաստ պահակներ, արթուն աչալուրջ . . .  
 Բոցաշունչ շընչով փողիմ հըրաման:

Սաթենիկ որ ծածուկ քարայրի բերնէն ունկնդիր կ'ըլլայ  
 այդ խօսակցութեան, կը տեսնէ որ հասեր է ճգնաժամը,  
 պիտի նահատակուին Ոսկեանք և իր սիրելի Սուքիասը. ա-  
 սոնք կրկէս չի մտած, երբ Արտաւազդ փողը բերանը կ'առնէ  
 և հազիւ թէ կը սկսի նշել, Սաթենիկ կը նետուի դուրս, կը  
 գոռայ:

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍԱԹԵՆԻԿ

Լըու':

Աժնոքը յուզուած ու շուարած, Արտաւազդ փողը շրթունքէն  
 վար բռնած, ապուշ գայրութով կը հարցընէ:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Դու հոն . . . ամբարիշտ'

Այս աիւումրին մէջ:

Այլք միաբերան շառագունած կը հարցընէ:  
 ՎՐՈՅՐ

Մայր իմ:

ՄԻՒՍ ՈՐՍՈՐԳԻՔ

Տիկին:

ԿԱՊԱՐՃԱԿԻՐՔ

Երկինք:

ՍԱԹԵՆԻԿ

Մի զարմանաք: Արտաւազդ  
 կը պատուիրեմ, թող ազատ  
 Քրիստոսի այս աիւումր սուրբ:

ԱՐՏԱՒԱԶԳԻ

Այ եղիկելի մայր, և դու հըրաման  
 Գոռաս ու կու տաս. վայել է քեզի



Մայր զու թագուհի, Արտաշատի հարս  
 Գալ ու ծածկըւիլ այս քարայրի մէջ,  
 Պատուել Գրիստոսի այս ահուժը արխմար:  
 Ես քեզ հըրաման ահա կը դոռամ.  
 Ծածուկ աճօթխած հեռացիր ասիէ,  
 Եւ թող չիմանայ Արտաշատ ոստան  
 Քրիստոսնէից հեա հազարգահցութիւնդ.  
 Գընա հեռացիր, ընկիր կըսոյ ոսք,  
 Յիշէ աստուածոյ այնքան պարզեւնիւր,  
 Յիշէ քուքներուն քեզի պաշտամունք:

## ԱԱԹԵՆԻԿ

Լըռէ քեզ կ'ըսեմ, Արտաւազդ որդիս,  
 Երբէք իրաւունք չեմ տար քու բերնիլ,  
 Պատգամել ինծի գոտոզ հրամաններ:  
 Կարծես քուքներէն օծուած քըրմապետ,  
 Ինծի խըրատ տաս ծաղրական պատուրէ:  
 Ես իբրեւ ձեր մայր, իբրեւ թագուհի,  
 Հըրաման գոռամ ձեզի մարտիկներ,  
 Որսորդներ ազնիւ և ձեզ զաւակներս,  
 Թողուցէք ազատ այս բարի մարդիկ:  
 Ոչ ոք պատաւոր կարող է ըլլալ  
 Հոգւոյ զըրաւիչ ներքին բերումին:  
 Գընա Արտաւազդ իշխէ քու կընոջ.  
 Գընա խըրատէ հարձնըրդ լըկաի,  
 Գու հոս գործ չունիս. շուտով հեռացիր:

## ԱՐՏԱԻԱԶԳ

Այդ ինչ կըրակոտ նախատինք թափես,  
 Մայր, գիտցիր, յիշէ, թէ ինձ հեա խօսիս:  
 Ինչո՞ւ կը վառես սիրտըս զայրացած.  
 Ահեզ խոտլութիւն գիտցիր կը պայթի.  
 Թէ իմ հրամաններ արդ չի կատարին.  
 Վըճոներ եմ ջնջել քրիստոսնէից ճեա:  
 Չեզի պատուիրեմ, կապարճակիրներ,  
 Օն անդիմադիր զասոնք ջարդեցէք:

Կապարճակիրները սոսկալով Արտաւազդէն, անոր կը հնա-  
 գանդին. կը հանեն սուրբնին. կը լարեն աղեղնին: Սաթե-  
 նիկ տեսնելով որ բռնկած է որդին, կը նետուի ահուժըն մէջ,  
 Կազազակէ:

## ԱԱԹԵՆԻԿ

Թէ իմ ոստանի զինուորներ քաջ են,  
 Թող զիս ոսնակոխ ընեն անխընայ.  
 Յիշէ Արտաւազդ, որ այս երակներս  
 Քեզի ոչ ժանտ թոյն այլ արիւն տըւին.  
 Քրիստոսնէից հեա ես ալ կը մեռնիմ,  
 Թէ չի հնազանդիս ինծի Արտաւազդ,  
 Թէ կ'ուզես ըլլալ մայրաստղան . . . ընարէ':

Վըրջը ծածուկ Արտաւազդին կ'ըսէ:

## ՎՐՈՅՐ

Սիրուն Արտաւազդ  
 Խընայենք մեր մօր.  
 Ինչ որ ինք գործէ,

Պէտք է լիբրագրենք  
Զըղազարութեան :

ԱՐՏԱԽԱԶԳ

Մայր զիս ինչո՞ւ կը մըղեն  
Ըլլալ անգութ ոճրագործ :

ՍԱԹԵՆԵԻԿ

Ես չեմ հեռանար անմեղ ակումբէն .  
Ոճիր ահաւոր է գիացիր, որդեակ,  
Հաւատքի համար ըսպաննել գուրիշ :

ՈՍԿԵԱՆՔ

Խընդրենք, պաղատինք, աիկին Սաթենիկ,  
Նահատակութեան շըլլալ մեզ արգելք :  
Գոչեց մեզ լիբրէն Աստուած բարեգութ,  
Խայտալով ցընծուն կ'ուզենք թըռչիլ հոն :

ԱՐՏԱԽԱԶԳ

Չեմ կարող զըսպել զայրոյթս հըրատապ .  
Բաւ է հերիք է, մայր իմ Սաթենիկ,  
Ես գարձեալ հըրաման կու տամ սոսկալի .  
Ընդ փոյթ կըրարեցէք քրիստոնէից զլուս :

Ինքը կը յարձակի մօրը վրայ, կ'ուզէ զայն դուրս քաշել  
անոնց խմբէն :

ՍԱԹԵՆԵԻԿ

Չարկին ախ գարձեալ  
Չար սղիք զըլխիս,

Աստուածներ անգութ  
Կըլլաք վրէժխընդիր :  
Արատազգ որդիս  
Մարմըրիմ մեանիմ . . .  
Ախ թէ զիս սիրես  
Գոնէ ազատէ  
Չխմըս Սուքիաս :

ՎՐՈՅՐ

Մայր իմ տարփելի, ինչո՞ւ կ'այլայլիս,  
Կամքըդ կատարուի ախ մի տաղնապիր :

Սուքիասը կը քաշեն Ոսկեանց խմբէն դուրս . նա չի դիմա-  
դրեր տեսնելով որ Սաթենիկ շափազանց այլայլած է ջըղագար :  
Սրածուծիւնը կը սկսի :

ՈՍԿԵԱՆՔ

Յընծայ նորածիլ կըրօնք Գրիստոսի :  
Խայտալով զըրուինք զինուորք քաջարի,  
Ահա կը թափի արին կամրորակ .  
Հասանք Գողգոթայ առ քեզ խաչեցեալ .  
Թափէ ով հրկինք շընորհք լիառաս  
Հողւոյլ նըրբաթեւ տենչանք սաւառնիլ,  
Առ բարձեալդ Աստուած հասնի մեր հողին :

Պահակները դեռ մարտիրոսաց զլուխը չի կորած, սրով ա-  
նոնց կողերը կը վերաւորեն . ոմանք նիղակներով կը խոցեն .  
աշուընին կը հանեն : Մարտիրոսները համակամ վերի ա-  
զօթքը կ'արտարեն : Արտաւազդ և Վրոյր կը ջանան գոցել  
Սաթենիկի աշուընները որ չի տեսնէ ողբերգու տեսարանը :  
Սուքիաս մեկ քիշ Սաթենիկէն հեռանալով, Ոսկեանց կ'ուզէ  
իւր խօսքերը :

## ՍՈՒՔԻՍՍ

Ոսկի, մի մոռնար  
 Թէ ընձիւզ մը չոր  
 Ծառէզ անթառամ  
 Թափառի հոս վար.  
 Յիշէ զիս Ոսկի,  
 Յիշէ ընկերներս.  
 Յառաջ ձեր սուրբ զործ,  
 Մենք վարենք յառաջ:  
 Հա՛ թըռիք երկինք,  
 Ամպերէն շընորհք  
 Մեր ծարաւ սըրախն  
 Կաթեցէք առատ.  
 Մեր սիրտ անջըրդի,  
 Ձեր սուրբ արիւնով  
 Թող ծըլի բանայ  
 Կըրօնքի վարդեր:  
 Յիշեցէք ըզմեզ  
 Որ մեր ծագիկներ  
 Չունենան արատ  
 Չունենան փուշեր:  
 Բուրենք զբախտի խունկ,  
 Ծըծենք զբախտի բոյր:  
 Ակումբ պաշտելի,  
 Ձեզ բիւր երանի  
 Տան և հրեշտակներ  
 Երգեն հիացած.

« Երանի անոնց  
 Որ երկնի համար  
 Կը թափեն արիւն »:

Սաթենիկ դեռ աւելի կ'այլայլի երբ աչքին կը զարնէ նա՝  
 Հատակաց արեւելուայ տեսարանը. ա՛լ կը սկսի զառանցել: Մի  
 և նոյն ատեն Արտաւազդ նշան կու տայ որ կապարճակիւ-  
 ները գլխատեն Ոսկեանց խումբը: Օղբ կը պղտորի, սեւ ամ-  
 պեր կը գիզուին, սաստիկ հողմ:

## ԱՐՏԱՒԱԶԳ

Մի տագնապիր մայր սիրելի.  
 Տես Սուքիաս զըլխիկ կանգնած,  
 Քեզ կ'ըստիսի. մենք զաւակներդ  
 Վըրոյր սիրուն և Արտաւազդ  
 Քեզի կ'ըլլանք վահան պարիսպ.  
 Քանի մօտ ենք քեզի, ո՛վ մայր,  
 Ինչո՞ւ վախնաս վատ քաջերէն:

## ՍԱԹԵՆԻԿ

Դուք իմ զաւակք, եղաք պատճառ  
 Այս կացութեանս. հիմա կ'ուզէք  
 Ձիւ ըստիսի, քաջալիբրի.  
 Գացէք հեռու, անհետացէք:  
 Դու Սուքիաս մի հեռանար,  
 Ես քեզի հետ պիտի խօսիմ,  
 Ահա ըզգամ հողույս շիջում:  
 Խօսքեր քո վառ թող արծարծեն  
 Միտած կորած կեանքիս լապտեր:

ՎՐՈՅՐ, ԱՐՏԱԻԱԶԳԻ

Ըզքեզ այս դիրքով ձըզել հեռանալ

Չենք կարող երբէք և ոչ երազել.

Թէ մեռնիս, մենք ալ քեզ հետ կը մեռնինք:

Կը սաստկանայ հողմը. ծառերը զարհուրելի կերպով կը հող-  
մակոծին. ճիւղերու շառաչ. տերեւներ, փոշի օդին մէջ կը յու-  
զուին: Կրկեսի գազանները կը մնչնէն զայրացած, քարայրի  
բերնէն տարօրինակ լալկան ձուռց մը կը լսուի: Կ'որոտայ եր-  
կինք: Արտաւազդ ձեռքով նշան կու տայ, որ գազանները ու-  
տեն, յոշոտեն նահատակ ընկած սուրբերու մարմինը: Այդ  
հրամանին վրայ Սուքիաս ծածուկ՝ Արտաւազդէն կը խնդրէ:

ՍՈՒՔԻԱՍ

Բարբ ի բարբ դիզես մօրբզ տանջանքներ,

Անարատ թող առւր մընան այլ մարմինք.

Գիացիր որ երկինք քեզ շանթահարէ:

Կը հնազանդի Արտաւազդ: Սակայն գազաններու աղաղակը  
կը ստուարանայ: Փայլատակում, գոռում գոռում:

ՍԱԹԵՆԻԿ

Նըշան սոսկալի կ'որոտայ երկինք.

Մըխայ վրէժխընդիր Քրիստոս նոր Աստուած.

Մէգ խոժոռապէմ՝ դիտէ զԱրտաշատ,

Մեղու գեղանազ նայի հրեշտակաց:

Ահա կը տեսնեմ՝ Ոսկեանց հողիներ

Թըռչին խայտալով ամպերու մէջէն,

Մօտենան մըտայլ երկնի վըհերուն,

Կը քըտուին անոնց, անոնք կը վառին,

Կը լուսաւորին: Աստղերու քովէն

Կը թըռչին հրեշտակք, փափկիկ մասններով՝

Անոնց վըպշելով, քաշեն արծաթիկ

Թեւեր ճառագայթ, հլուսն լուսոյ ցանց

Ռւր մընանն հողիք Ոսկի ակումբին:

ԱՐՏԱԻԱԶԳԻ

Չառանցիս մայր:

ՎՐՈՅՐ

Չըզազար յուզուած

Խօսի, կ'երազէ:

ՍՈՒՔԻԱՍ

Յառանջ Սաթենիկ,

Պատմէ անպատում

Տեսիլքբզ սիրուն:

ՍԱԹԵՆԻԿ

Թըռչին հրեշտակներ թեթեւ թըռիչով,

Շողշող արծաթիկ վեր քաշեն ուռկան:

Լըսեմ՝ ամպերու լոյս փայլակ գաշաէն

Անուշ նազելի ներպաշնակ մըրմունջ,

Մեղմօրօր երպեր ծրփին, զարնուին

Ամպերու բախին՝ հնչեն անուշակ,

Չայենն ու կազմեն մեղմ խըմբանըւազ:

Ոսկիի հողին և իր ընկերաց

Ըզմայլած լըսեն երկինքի քընար:

Ան գեռ կը թըռչին սուրհան անընդհատ

Կը կըտրեն ամպեր, գունդ գունդ հրեշտակներ

Ահարեկ պարկեշտ կը բըռնեն բարեւ  
 Թըրոչող սաւառնող Ոսկեանց ահուճբին:  
 Բայց Ոսկին գեւ վար կը նայի գիտէ,  
 Կարծես իր մաքուր աչքով կը խօսի,  
 Կարծես իր ոսկի շըրթունքներ բանայ:  
 Սուքիաս, սոսկամ... մեկնէ իր գիտում.  
 Հարցուր Ոսկիին Բ՞նչ կը կամենայ,  
 Կարծես պատուիրէ իր ճամբան բըռնել . . .

ԱՐՏԱԻԱԶԳ.

Ա՛խ, մայր իմ, բաւ է,

Քաջկրուն հիւսած

Նանիր երազոյ

Հաւատք ընծայել:

Բլուրը ուր անկուած է խաչափայտ մը, փայլատակներով  
 կը լուսաւորուի, երկինք զարհուրելի կ'որոտայ, կը սասակա-  
 նայ հողմը: Խաչափայտը կը շանթէ կայծակներ: Քարայրէն չըւո-  
 ցի ձայնը սոսկալի կը մոնչէ: Սաթենիկ շոտագունած կ'ե-  
 րազէ:

ՍԱԹԵՆԻԿ

Սուքիաս ո՛ւր ես, հասիր օգնութեան.

Կարծես սաքիս տակ վըհեր կը բացուին,

Գըլլիս վրայէն. ամպերու լեռներ

Իրար զարնբին, կըրակ կը հաննեն.

Մինակ օղին մէջ կախուած կը գողամ,

Կը տեսնեմ Արաքս մըրոտած սեւցած

Հոսանքներ վիժէ զըժոխքի անդունդ,

Մութ վըհերուն մէջ կը կազմէ ծովեր.

Ահա Պըղուտոն մըզէ օդապար  
 Քառարոյի ձիեր, ժանիք ի ձեռին  
 Գոռոզ շանթարձակ նետէ ինձ ակնարկ,  
 Ծովը փըրփրազէզ պատէ կ'արշաւէ,  
 Ինձի մօտենայ և երեքժանին  
 Խըրէ սըրտիս մէջ. ահա ճիւղաներ  
 Իրեն սոսկալի ահեղ պաշտօնեայք:  
 Ա՛յ, ա՛յ, ահարեկ . . . սարսիւմ . . . օգնութիւն . . .

ԱՐՏԱԻԱԶԳ.

Մայր:

ՎՐՈՅՐ

Երա՛զ է մայր:

ՍՈՒՔԻԱՍ

Քոյր յիշէ Ոսկին

Բարեխօս բըռնէ:

Քարայրին բերնէն սանցողի խօսքոտ մտունը կը լսուի:  
 Որոտ, փայլակ, հողմ անընդհատ:

ՍԱԹԵՆԻԿ

Գըլլորտըկիմ, հասէք որդիք,

Վըրոյր, թըրիք, գահաւիժիմ,

Հասէք որդիք ինձ օգնութեան:

Գոցէ բերանըդ տարտարոս,

Տեսիլ ունիս սոսկալիթխար:

Դըժոխապես գոռ Պըղուտոն

Չարկաւ ինձի, ընկայ զըժոխք:

Ճիւազներու ժանիքներէն  
 Շըզթաններով կախուած հողիք  
 Տարտարոսի սուր ժայռերուն  
 Բաղին իրըշրին սարսափահար :  
 Ահա ինձ մօտ կու գան ճիւազք  
 Օձագանդուր ջահ ի ձեռին  
 Ժանա Տիւրիսն և Ալեքսով :

ԱՐՏԱՒԱԶԳ

Չարթիր մայր իմ,  
 Մի երազեր :  
 Քեզի հետ ենք  
 Քո Սուքիաս,  
 Որդիք Վըրոյր  
 Եւ Արաւազդ.  
 Ըզքեզ գըրկեն  
 Մեր բազուկներ :  
 Ահա կ'երթանք  
 Մեր արքունիք.  
 Մի երազեր,  
 Մայր ըսթափէ :

## ՏԵՍԱՐԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Արգամի ուրուականը քարայրի գրան առջև կանգ առած, կը ճուայ. վերէն վար ծածկուած է սեւ սաւանով մը, սոսուընե-րուն պըլլուած են հաստ օձեր : Վրոյր և Արտաւազդ զայն տեսնելուն, սարսափած կը գոցեն աչուընին ետ ետ երթալով կը հեռանան. սոսկումը ընդհանուր է :

ՍԱԹԵՆԻԿ

Ողորմուկ, լըսեմ ճըւալ լալագին.  
 Չայն ծանօթ հընչէ ախանջիս, ահա  
 Ողիք կատաղիք, ահեզ Եւսինեայք  
 Մըլեն բերեն ինձ հողի մ'ողբացող :  
 Այ, եղուկ գըլխուս : Երկինք, Տարտարոս . . .  
 Արգամ . . .

Ուրուականը առանց շարժելու աչուըները գետին խոնար-հած, կ'ոմայ :

ՈՒՐՈՒԱԿԱՆ

Գու չես հասած Տարտարոս.  
 Կ'երեւիմ քեզ Սաթենիկ :  
 Ես եմ Արգամ Մուրացան,  
 Որդիքըք Վրոյր, Արաւազդ  
 Հողիս գըթիւք նեակցին :  
 Հասան իրենց փափաքին :

ՍԱԹԵՆԻԿ

Ժայթքէ, գըթիւք կրակ ահեզ  
 Լափէ որդիքս ժանտաժուս :

## ՈՒՐՈՒԱԿԱՆ

Տիկին սիրուն Սաթենիկ,  
 Մի անիծեր քո որդիք,  
 Ուրիշներուն կըրած վիշաք  
 Չեն ըստիներ ըզմեզ միշտ:  
 Կ'երթամ մըտնեմ ի զըժոխք.  
 Օձեր ոտքիս պըլլըւած  
 Ի տարտարոս գիս քաշեն:  
 Անէճքդ ետ առ, Սաթենիկ,  
 Ի սէր թագին հայրենի.  
 Թագաժառանգ զաւակներդ  
 Օրհնէ սիրէ մ'անիծեր:  
 Կ'երթամ տանջիմ ի զըժոխք  
 Թող չի տանջի հայոց տուն.  
 Առնեն օրհնեք քո որդիք  
 Որ լաւ վարեն հայրենի  
 Իշխանութիւն տարփելի:  
 Ճըւամ կու լամ յաւիտեան  
 Մուրացան տան կործանում.  
 Արշակունի թող Ոստան  
 Կանգուն մընայ յաւիտեան:  
 Տեսայ տիկին սր կու լաս  
 Եկայ ըզքեզ ըստիմել.  
 Գիտցիր ողջ ես Սաթենիկ  
 Գընա ապրէ թագուհի:  
 Այ կը պըրկեն սառըներս  
 Օձեր՝ մըղեն զիս զըժոխք.

Մընաս բարով Հայաստան,  
 Երախտաւոր քո զաւակք  
 Թող չերազեն երախտիք,  
 Վարձատրութիւն արժանի:

Որտաներու գոռ բոմբիւններու հետ կը լսուի ուրուականի վերջին ոռնացող ձայնը. ուժգին փայլատակումի առեն կ'անհետանայ ստուերը:

## ՍԱԹԵՆԻԿ

Քանի Արզամ գու հոս ես,  
 Դըժոխք ինձի զարհուրանք  
 Եւ սոսկում չի սլատմանք:  
 Հըրէշք, վիշապք, կատաղիք  
 Պիտի սատկին քո նետով.  
 Խաւարի մէջ սաւառնինք,  
 Արզամ ապրինք միասին:

## ՍՈՒՔԻԱՍ

Չարթիր, տիկին Սաթենիկ,  
 Յիշէ Ոսկին և իր խումբ  
 Յիշէ անոնց քարոզներ:

Սաթենիկ կը ցնցուի, կը շարժէ բազուկները. կիսաբաց աչուքներով կը խօսի ապշած:

## ՍԱԹԵՆԻԿ

Ո՛ր եմ . . .

## ՍՈՒՔԻԱՍ

Բազուկներուս մէջ:

## ՍԱԹԵՆԻԿ

Ուժամտափ սարսիժ, նեղեն զիս քաջեր:  
Երազ սոսկալի հիւսեցին ճիւղադք:  
Սուքիաս արի հաս ինձ օգնութեան:  
Կարծես Ատրոպէ կեանքիս թեւ կըտրէ:

## ՍՈՒՔԻԱՍ

Տիկին Մամենիկ լմանէ երազներդ.  
Յիշէ մեր Ոսկին ըզբեզ կը փըրկէ:

## ՍԱԹԵՆԻԿ

Գողթնի գուսանք ճերմակ հագէք,  
Քընար զարկէք, արխուր քընար:  
Ահա աչերս զոր երգեցիք  
Կը մըթագնին կը խաւարին:  
Ալ մի յիշեր զու Սուքիաս  
Քո նոր կրթոն և քու Սասուած.  
Տարտարասի ահեզ անսիլ  
Ձիս կաշկանդէ հին կըրթոնքին:  
Հարէք գուսանք Գողթան քընարք  
Ահա մարի կեանքիս արեւ:  
Քեզ Արտեմիս մայր բարեգութ  
Կը յանձնեմ սիրարս սխապրութ:

## ՍՈՒՔԻԱՍ

Տիկին քոյր իմ Մամենիկ,  
Կը մտրորիս տակաւին:  
Յիշէ Ոսկեանց անպատում  
Արիութիւն, սըրբութիւն.

Յիշէ ինչպէս համոզուած  
Պաշտեցին մեր նոր Սասուած,  
Թէ սուտ ըլլար նոր կըրթոնք  
Ինչո՞ւ այլ քաջ զօրականք  
Պիտի արիւն թափէին:

Սամենիկ հագիւ կրնայ թոթովել իր այս փերջին խօսքերը,  
ու գունաստ կը մարմըրի կը լռէ:

## ՍԱԹԵՆԻԿ

Չունիմ ալ ուժ խօսելու . . .  
Ո՞ր աստուածը արդ գոչեմ  
Ինձ եղիկըյս օգնութեան:

Վ Ե Ր Ձ



ՀՀ Ազգային գրադարան



NL0339493

28738